


# ԳԻՄՆԱՍԱԿ

ԲԵՐԻՈՅ ԸՆՅՈՑ ԹԵՄԻ ԱՃԳԱՅԻՆ ՍՈՍՆՈՐԴԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐՈՒ (Ի.Ը. ՏԱՐԻ)  
 نشرة مطرانية الأرمن الأرثوذكس  
 Ապրիլ Ա. 2018

## Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԵՒ ԿՈՄԱԿՅԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԲԵՐ ԸՆՈՐՀԱԽՐԵՅԻՆ ՀԱԼԵՂԻ ՀԱՅ ՀԱՍԱՅՆՔԱՊԵՏՆԵՐԸ

Կիրակի, 1 Ապրիլ 2018-ին, Հալեպի հայկական եկեղեցիներուն զանգե-  
 ռը ղօղանջեցին՝ աւետելով Ս. Յարութեան տօնը:  
 Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ Ս. Պատարագի արարողութիւնը



հանդիսապետեց Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գեղշ. Տէր Շահան Սրբ. Արք. Սարգիսեան:



Պատարագի արարողութեան ներկայ էին ԶՀ Հալեպի Գլխաւոր Հիւպատոսը, փոխհիւպատոսը, Սուրիոյ խորհրդարանի հայազգի երեսփոխանը, Ազգ. Երեսփոխանական Ժողովի ու Ազգ. Վարչութեան անդամներ եւ հաւատացեալ ժողովուրդի հոծ բազմութիւն մը:


Քարոզի պահուն, Սըրբազան Հայրը Ս. Յարութեան տօնի իր պատգամը տուաւ:

Նոյն ժամերուն, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ եւս Ս. Եւ Ամմահ Պատարագ մատուցուեցաւ:

Միջօրէին, Սրբազան Հայրը Ս. Աստուածածին եկեղեցւոյ ներքնասրահէն ներս շնորհաւորութիւններ ընդունեց:

Սրբազան Հայրը եւ հայ առաքելական համայնքը շնորհաւորելու եկած էին Պաաս կուսակցութեան Սուրիոյ փոխկուսակցապետ Հիլալ ալ Հիլալ, Սուրիոյ զբօսաշրջութեան նախարար Դոկտ. Պշըր Եազճի, Հալեպի նահանգապետը, ոստիկանապետը եւ պետական ու զինուորական բարձրաստիճան պատասխանատուներ, ապա նաեւ հալեպահայ միութիւններու եւ կրթական հաստատութիւններու ներկայացուցիչներ:

Ս. Յարութեան տօնին առիթով Սուրիոյ Հայ Կաթողիկէ եւ Աւետարանական համայնքապետները եւս պետական բարձրաստիճան պատասխանատուներու շնորհաւորութիւնները ընդունեցին:



Զորեքշաբթի, 4 Ապրիլ 2018-ի առաւօտ, Հալեպի Մուֆթիին ներկայացուցիչն ու կրօնական կալուածներու գրասենեակի տնօրէնը եւս այցելեցին Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գեղշ. Տէր Շահան Սրբ. Արք. Սարգիսեանին եւ շնորհաւորեցին սրբազան հայրն ու հայ համայնքը՝ Ս. Յարութեան Տօնին առիթով:

## ՄԱՅԻՍԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՒՄԻ ՆՈՒՐՈՒԱԾ ԵՐԳԱՀԱՆԴԻՄ

Հովանաւորութեամբ Հայաստանի Հանրապետութեան 100-ամեակի Սուրիոյ Կեդրոնական Մարմնին, Սուրիոյ Երիտասարդական Միութեան Կեդրոնական Վարչութիւնը կազմակերպեց երգահանդես մը, որուն ընթացքին ելոյթ ունեցաւ Հալեպ ժամանած նախկին ՍԵՄ-ական Ռաֆֆի Հալեպլեան՝ հանդիսատեսին հրամցելով փունջ մը յեղափոխական եւ հայրենասիրական երգեր, «Սպի-



տակ» տուագախումբին ընկերակցութեամբ:

Իր խանդավառ ու ոգեւորիչ ելոյթով, Հալեպլեան մեներգեց մեր ժողովուրդին պայքարի, տա-



ռապանքի, հոգեվարքի եւ յաղթանակի ապրումները նկարագրող երգեր՝ ազգային գարթօնքի շրջանէն անցնելով ֆետայական շարժում, ցեղասպա-



նութեան արհաւիրքի պահերէն հասնելով մինչեւ Մայիսեան յաղթանակ ու զինեալ պայքարէն մինչեւ արցախեան շարժում եւ ժամանակակից Սուրիոյ պատերազմ:

Խմբագրական

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆԴԻՆ

Ս. Յարութեան Տօնին առիթով, Սուրիոյ Նախագահին թելադրանքով պետական բարձրաստիճան պատասխանատուներու քրիստոնեայ եւ հայ համայնքապետներուն այցելութիւնը երկրէն ներս կրօններու եւ մշակոյթներու համագոյութեան պահպանումին պատգամը կը փոխանցէր:

Դամասկոսի մէջ Սուրիոյ խորհրդարանի Նախագահ զրկտ. Զամուտա Սապադ այցելեց Դամասկոսի քրիստոնեայ եւ հայ համայնքապետներուն, իսկ Զալէայի մէջ Սուրիոյ Պասա Կուսակցութեան փոխնախագահ Զիլալ ալ Զիլալ, ինչպէս նաեւ Սուրիոյ զբօսաշրջութեան Նախարարէն, Զալէայի Նահանգապետէն եւ անոնց ընկերակցող պետական բարձրաստիճան պատասխանատուներէ բաղկացած պատուիրակութիւն մը այցելեցին հայ համայնքապետներուն:

Եթէ Նկատի ունենանք վերոյիշեալ այցելութիւններուն առիթը, բնականաբար, մեզի պիտի թուի, թէ անոնք Ս. Յարութեան տօնին առիթով կատարուած շնորհաւորական այցելութիւններ են պարզապէս, որոնք պատերազմի Նախորդող տարիներուն ալ տեղի կ'ունենային եւ Նորութիւն չեն համարուիր: Իրականութեան մէջ, սակայն, սուրիական պատերազմի ա՛յս փուլին, բարձրաստիճան պատասխանատուներու մակարդակով կատարուած շնորհաւորական այս այցելութիւններն ու անոնց յաջորդող քարոզչական աշխատանքը ներքին թէ արտաքին կողմերու քանի մը պատգամ կը յղեն:

Առաջին պատգամը ուղղուած է Սուրիոյ դիմագիծը փոխելու համար տարիներ շարունակ Նկրտող հաւատարմութեան գաղափարներու խնկարկուներուն: Անոնց, որոնք պատերազմի այս տարիներուն խաւարած փոխարինում կրօնամոլներ գրգռելով, կաշառելով Սուրիա ճամբեցին ու քանդել տուին եկեղեցիներ, հնագիտական վայրեր, թանգարաններ եւ այլն՝ ամէն գնով աղաւաղելու Սուրիոյ դիմագիծը, քաղաքակրթութիւնը, մշակութային եւ կրօնական բազմազանութիւնը: Անոնք առաւելաբար փորձեցին քայքայել Սուրիոյ ընկերային հիւսուածքը՝ համայնքային եւ կրօնական լարուածութիւններ սրելով, կրօնաւորներ ու մշակութային գործիչներ սպաննելով:

Այս այցելութիւնները եկան հաստատելու, որ Սուրիան, եթէ տարի մաքառելէ վերջ, կը շարունակէ մնալ կրօններու եւ մշակոյթներու համագոյութեան երկիր. եկան հաստատելու, որ երկրի բարձրագոյն դեկլարութիւնը կը շարունակէ ամէն ջանք թափել ոչ միայն պահպանելու սուրիական ընկերութեան խճանկարը, այլեւ բոլոր համայնքները մասնակից դարձնելու երկրի վերակառուցման ու Նոր Սուրիան, Սուրիոյ Նոր քաղաքացին կերտելու աշխատանքին:

Երկրորդ պատգամը սեփական ուժերուն վստահելու եւ միասնական ճիգերով երկրին ու անոր փոքրամասնութիւններուն դէմ հիւսուած դաւերը չեզոքացնելու հաւատքի ամրապնդման շեշտադրումն էր:

Շնորհաւորական բոլոր այցելութիւններուն ընթացքին շեշտը դրուեցաւ սուրիական բանակին մարտավարութեան, վերջին ամիսներուն, յատկապէս արեւելեան Դուբայի մէջ, անոր սրընթաց յառաջխաղացքին, աշխարհակուլ ուժերու կողմէ ծրագրուած զինուորական թէ քարոզչական յարձակումներուն դէմ արձանագրած յաղթանակներուն վրայ: Սուրիական բանակը, դաշնակից երկիրներու զօրակցութեան հետ մէկտեղ, գետնի վրայ հերոսական պատմութիւն կերտեց: Աշխարհի գաւազան երկիրներէ Սուրիա դրկուած, զինուորական եւ նիւթական հըսկայ կարելիութիւններով օժտուած հարիւր հազարաւոր ահաբեկիչներուն դէմ յաղթանակ արձանագրելը, տակաւին՝ ստորգետնեայ հարիւրաւոր փախուղիներ, կառուցապատուած ու կահաւորուած ապաստաններ, արդիական հիւանդանոցներ պատրաստած ուժերու յարձակումները ձախողութեան մատնելը բանակի մը հզօր կարելիութիւններուն եւ գաղափարական ոյժին մասին կը խօսին պարզապէս:

Պատերազմի օրերուն, երկրի տարածքային ամբողջականութեան, արդարութեան ու ժողովրդավարութեան հաստատման ջատագովը հանդիսացող հայ համայնքը, պետական ներկայացուցիչներուն հաստատումով, որպէս վստահելի ու գործունեայ համայնք իր դերակատարութիւնը պիտի ունենայ Սուրիոյ վերակառուցման, ընկերային հիւսուածքի պահպանման ու Նոր Սուրիոյ առողջ քաղաքացին կերտելու աշխատանքին մէջ:

Ճիշդ է որ սուրիական տագնապը իր աւարտին չէ հասած տակաւին, այս այցելութիւնները, սակայն, Նոր Սուրիան կերտելու պատրաստակամութիւնն ու գործնական քայլերու մեկնարկը կ'ուրուագծեն՝ վեր առնելով երկրին մէջ հայ համայնքին կառուցողական ներկայութիւնը:

«Գ.»

-ՍԱՆԱ.- Բուսիոյ Նախագահ Վլատիմիր Փութին հաստատեց, որ Բուսիա գանազան կողմերու հետ կը գործակցի Սուրիոյ տարածքային ամբողջականութիւնը պահպանելու եւ ահաբեկչութիւնը արմատախիլ ընելու համար:

Չորեքշաբթի, 4 Ապրիլ 2018-ին, Անգարայի մէջ Փութին Թուրքիոյ Նախագահ Բեճէպ Թայիպ Էրտողանի հետ մամլոյ միացեալ ասուլիսի մը ընթացքին ըսաւ, որ Բուսիա անհրաժեշտ կը համարէ, որ սուրիական բոլոր կողմերը մաս կազմեն իրենց երկրի ապագան ուրուագծելու եւ սուրիական տագնապը լուծելու գործընթացին՝ աւելցնելով, որ Անգարայի մէջ կողմերը խորհրդակցած են Սուրիոյ մէջ զինադադարի համաձայնութեան ամրապնդման եւ միջսուրիական բանակցութիւններու շարունակութեան համար բարենպաստ պայմաններու ստեղծման շուրջ:



Բուսիոյ Նախագահը Երեքշաբթի, 3 Ապրիլին յայտնած էր, որ եռակողմ հանդիպում մը տեղի պիտի ունենայ իր, Թուրքիոյ Նախագահ Բեճէպ Թայիպ Էրտողանի եւ Իրանի Նախագահ Զասան Բոհանիի միջեւ, որպէս Ասթանայի գործընթացը հովանաւորող պետութիւններու երկրորդ հանդիպում, որուն ընթացքին կողմերը պիտի քննեն Նոյեմբեր 2017-ին Սոչիի մէջ գումարուած առաջին գագաթնաժողովի որոշումներուն գործնականացման ընթացքը:

Իր կարգին Էրտողան ըսաւ, որ Բուսիա եւ Թուրքիա իրենց կարելին ի գործ պիտի դնեն՝ տարածաշրջանին մէջ խաղաղութիւն ու կայունութիւն հաստատելու համար:

Յիշեցը, որ Էրտողան թրքական հողերը ծառայեցուց զինեալ ահաբեկչական խմբաւորումներուն դէպի Սուրիա հոսքին, այնտեղ ապաստան տուաւ, մարգեց եւ նիւթապէս նեցուկ կանցնեցաւ անոնց՝ տրամադրելով զէնք ու զինամթերք: Այդ խմբաւորումներն էին, որոնք Յունուար ամսուրն է ի վեր յարձակումներ գործեցին Աֆրիկի ուղղութեամբ, թալանեցին տեղւոյն բնակարաններն ու հաստատութիւնները՝ պատճառ դառնալով հարիւրաւոր քաղաքացիներու մահուան:

-Իրանի Նախագահ Զասան Բոհանի Նախքան իր ռուս եւ թուրք պաշտօնակիցներուն՝ Վլատիմիր Փութինի եւ Բեճէպ Թայիպ Էրտողանի հետ հանդիպումը ըսաւ. «Սուրիական հողերուն վրայ օտար երկիրներու ազգամակն ներկայութիւնը, առանց սուրիական կառավարութեան արտօնութեան, անօրէն է, կը հակասէ միջազգային օրէնքները եւ պետք է վերջ գտնէ»:



-Երկուշաբթի, 2 Ապրիլին, Լիբանանի «Մոնրօ» պանդոկին մէջ տեղի ունեցաւ Ուղղափառութեան միջխորհրդարանական վեհաժողովը, որուն մասնակցող 8 հոգինոց սուրիական պատուիրակութեան մաս կը կազմէր սուրիահայութիւնը ներկայացնող երեսփոխան Ժիրայր Բէխտեան: Առաջին նիստին, որուն կը մասնակցէին կազմակերպութեան վարչութեան եւ յանձնախումբերու Նախագահներն ու գեկուցաբերները, նիւթը կը կեդրոնանար Թուրքիոյ շրջանային քաղաքականութեան եւ գործադրած միջամտութիւններուն վրայ: Չեկուցաբերները անդրադարձան յատկապէս Միջին Արեւելքի մէջ Թուրքիոյ կողմէ կատարուած զինուորական միջամտութիւններուն՝ բուն քննադատութեան ենթարկելով վերջին շրջանին Աֆրիկի մէջ Թուրքիոյ զինուորական ներխուժումը: Անոնք պահանջ ներկայացուցին, որ 4 Ապրիլին տեղի ունենալիք ժողովի փակման յայտարարութեան մէջ յստակօրէն դատապարտուի Թուրքիոյ յարձակողապաշտութիւնը: Սուրիոյ խորհրդարանի երեսփոխան Ժիրայր Բէխտեան խօսք առնելով ընդգծեց, որ Թուրքիոյ վարած քաղաքականութիւնը հակաքրիստոնեական ըլլալէ անդին նաեւ հակամարդկային է՝ թուելով Սուրիոյ արդիւնաբերական, շինարարական եւ ենթակառուցներու քանդումին պատճառները, որոնք թէ՛ ուղղակի եւ թէ՛ անուղղակիօրէն կատարուած են Թուրքիոյ կողմէ, որ 100 երկիրներէ աւելի եկած ահաբեկչական խմբաւորումներու անդամները զինած, անոնց ապաստան եւ նիւթական միջոցներ տրամադրած էր՝ այս բոլորը ծառայեցնելով Սուրիոյ կործանումին, եկեղեցական-կրօնական եւ մշակութային քանդումին՝ մէջբերելով Զալէայի մէջ գտնուող իսլամական ծեռագիրներու ոչնչացման օրինակը, որուն պատճառը Թուրքիան եղած է: Յիշեցը, որ գանազան երկիրներու երեսփոխաններ խոսքեր առին եւ անդրադարձան Թուրքիոյ ապակառուցողական քաղաքականութեան:



# Լուրեր Հայաշխարհին

## ՄԱՍՆՈՅ ՀԱՐՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

28-30 Մարտ 2018-ին, Երեւանի մէջ տեղի ունեցաւ ԶՅԴ Երիտասարդական եւ ուսանողական միութիւններու ներկայացուցիչներուն համահայկական խորհրդաժողովը:

Խորհրդաժողովին կը մասնակցէին 35 ներկայացուցիչներ՝ 16 երկիրներէ (Աւստրալիա, Արժանթին, Ուրուգուէյ, Քանադա, ԱՄՆ արեւելեան եւ արեւմտեան շրջաններ, Ֆրանսա, Յոլանտա, Լիբանան, Սուրիա, Իրան, Հայաստան, Արցախ եւ այլուր):

Բացման խօսքով հանդէս եկաւ ԶՅԴ Բիւրոյի Երիտասարդական գրասենեակի պատասխանատու ընկեր Սարգիս Մկրտչեան:

Եռօրեայ խորհրդաժողովին մասնակիցները նախ զեկուցեցին նախորդ երկու տարիներու իրենց պատկան միութեան գործունէութեան եւ դիմագրաւած դժուարութիւններուն մասին, ապա ունկնդրեցին ԶՅԴ Բիւրոյի Երիտասարդական գրասենեակի գործունէութեան զեկուցը:

Այնուհետեւ տեղի ունեցաւ ընկերակում «Հանրային Կապի Հարցը ԶՅԴ Երիտասարդական Դաշտին Մէջ», «ԶՅԴ Երիտասարդականի Արտաքին-Յարաբերական Աշխատանք-



ները», «ՀՀ 100-ամեակ», «Պատանեկան Ճամբարներ», «Դաստիարակչական Սիւթեր» եւ այլ հարցերու շուրջ: Լուսարձակի տակ առնուեցան ԶՅԴ Երիտասարդականին առջեւ ծառայած մարտահրաւերները եւ առաջարկներ հնչեցին լուծումներու ու հետագայ ծրագիրներու մասին:

29 Մարտին խորհրդաժողովի մասնակիցները հանդիպում ունեցան ԶՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ ընկեր Հրանտ Մարգարեանի հետ, որ խօսեցաւ «Հայաստանի Ներքին եւ Արտաքին Զաղաքական Իրավիճակն ու ԶՅԴ Դերն ու Ընելիքները» սիւթին շուրջ եւ պատասխանեց երիտասարդներու բազմաթիւ հարցումներուն:

Առանձին զեկուցներով ԶՅԴ Բիւրոյի Հանրային կապի գրասենեակի պատասխանատու ընկեր Արտակ Սարգսեան ներկայացուց «ԶՅԴ Հանրային Կապի Ռազմավարութեան Հիմնադրոյթները» եւ ԶՅԴ Մամուլ դիւանի պատասխանատու ընկեր Արտաշէս Ծահապազեան «ՀՀ 100-Ամեակ» թեմաները:

Խորհրդաժողովը տեղի ունեցաւ ընկերական ջերմ մթնոլորտի մէջ: Աւարտին խորհրդաժողովի մասնակիցները յայտարարութիւն մը հրապարակեցին:

**ԶՅԴ Բիւրոյի  
Երիտասարդական Գրասենեակ  
30 Մարտ 2018**

## ՀՅ ԴԱՆՆԱԿՅՈՒԹԵԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԵՒ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԱԺՈՂՎԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԶՅԴ Երիտասարդական եւ ուսանողական միութիւններու համահայկական խորհրդաժողովը:

- Լսելով Հայաստանի Հանրապետութեան ներքաղաքական, արտաքին քաղաքական եւ ընկերային-տնտեսական իրավիճակին մասին համապարփակ զեկուցը,
- Ընկերակցելով հայրենիքի եւ սփիւռքի երիտասարդութեան առջեւ ծառայած ազգային, կրթական եւ ընկերային հարցերը,
- Ընկերակցելով ԶՅԴ Երիտասարդական եւ ուսանողական միութիւններուն առջեւ ծառայած մարտահրաւերները,
- Անդրադառնալով միութիւններու կազմակերպական կարողականութիւններուն շարունակական զարգացման ու արդիականացման հարցերուն,
- Արձանագրելով արտաքին-յարաբերական մարզին մէջ ԶՅԴ Երիտասարդականին ձեռք բերած յաջողութիւնները,
- Ընկերակցելով միութիւններուն կողմէ Հայաստանի եւ Ար-



ցախի մէջ իրականացած պատանեկան բանակումներու հարցերը,

- Անդրադառնալով Հայաստանի Հանրապետութեան հիմնադրութեան 100-ամեակին առիթով ԶՅԴ Երիտասարդականի ընելիքներուն,
- Կը յայտարարէ.
- Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւններու երիտասարդութեան կրթական, ընկերային եւ քաղաքական հարցերը կը շարունակեն մտահոգիչ մնալ՝ պատճառ հանդիսանալով երիտասարդներու կրթական մակարդակի անբարարար ըլլալուն, ընկերային դժուարութիւններուն, աշխատանքի շուկայի անհամաչափութեան եւ քաղաքական կարելիութիւններու անհամաարութեան, որոնք պետութեան թերութեան հետեւանք են: Ուստի այս խնդիրները կը շարունակեն մնալ ԶՅԴ Երիտասարդականի սեւեռուն ուշադրութեան կիզակետին մէջ:
- Արցախի Հանրապետութեան միջազգային ճանաչման գործընթացը ԶՅԴ Երիտասարդականի արտաքին-յարաբերական աշխատանքներուն հիմնական քաղաքական առաջնահերթութիւնը կը համարուի:
- Հայաստանի Հանրապետութեան 100-ամեակի առթիւ ԶՅԴ Երիտասարդականը պետք է կազմակերպէ միջոցառումներ՝ թէ տեղական, թէ համահայկական մակարդակներով:
- Հայրենիք-սփիւռք համագործակցութեան առաւելագոյն արդիւնատուան համար երիտասարդութիւնը, եւ յատկապէս ԶՅԴ Երիտասարդականը ունին իրենց ուրոյն յանձնառութիւնը:
- Անհրաժեշտ է սփիւռքի համայնքներուն մէջ ընդլայնել հայ երիտասարդութեան համայնքային, կազմակերպական եւ քաղաքական ներգրաւուածութեան մակարդակը:
- Եական է միութիւններու աշխատանքներուն պատշաճ լուսաբանումը՝ հանրային կապերու ժամանակակից գործիքակազմի լայն կիրառումով:
- Սփիւռքի ԶՅԴ Երիտասարդական եւ ուսանողական միութիւններուն կազմակերպումով՝ Հայաստանի եւ Արցախի մէջ իրականացուող պատանեկան ճամբարները դրական կը գնահատուին ու պետք է շարունակուին՝ այդ եւ այլ ճանապարհներով նպաստելով հայրենիք-սփիւռք կապերու ամրապնդման, փոխճանաչողութեան բարձրացման՝ երիտասարդական-պատանեկան հարթակներուն վրայ:

ՀՀ Դաշնակցութեան երիտասարդական եւ ուսանողական միութիւններու խորհրդաժողովը աւարտեց իր աշխատանքները՝ յառաջիկայ երկու տարուան համար նախանշելով ԶՅԴ Երիտասարդականի հիմնական կազմակերպական եւ քաղաքական ծրագիրները:

**Յայտարարութիւն**

Հ Մ Ր Մ -ի Ծաւարշ Բրիտեան Բարաթի սրահի յանձնախումբը կազմակերպած է **2.ունպայի դասընթացը**

Մարզչուի ունենալով Օր. Հայկան Տեկիբնէնճեան

# ZUMBA

fitness

Արձանագրութեան եւ այլ մանրամասնութեան համար կանգահարել հետեւեալ հեռախօսահամարին: **0956757025**

## «ԵՐԵՔ ՍԵՐՈՒՆՂ». ՀԱՆՐԱԾԱՆՕԹ ԼՈՒՍԱՆԿԱՐԻ ՄԸ ՀԵՏՔԵՐՈՎ

## ՍՈՒՂ ԳԻՆ ՎՃԱՐԵԼՈՎ

Անի Ռաֆեան

«Ասպարեզ»ի խմբագրական

«Երեք սերունդ». Ապրիլեան պատերազմի խորհրդանիշերեն մեկը դարձած այս լուսանկարը ժողովուրդը այս անունով կնքեց: Լուսանկարի հերոսներեն Վաչական Պետոյեանը, որուն Արցախեան ազատամարտեն ետք պռոշեանցի Վաչօ կը կանչէին, Ապրիլին ալ, 90-ականներուն պէս երկմտանքի չմատուցաւ առաջնագիծ մեկնելու համար: Պատերազմ չէր ուզեր ան, բայց զինուորական զգեստն ու առաջին անհրաժեշտութեան պարագաները միշտ պատրաստ էին:

Ապրիլին ալ ան մեկնեցաւ սահման ու համոզուեցաւ, որ լաւ սերունդի կտակած են հայրենիքի պաշտպանութեան գործը:

«Ես ըսած եմ, Ապրիլին ալ ըսած եմ այս խօսքը, հիմա ալ կ'ըսեմ՝ պատերազմի ընթացքին բոլորը փախուստ կու տան, միայն մեր ազգն է որ յառաջ կ'ընթանայ», կը շեշտէ Վաչական Պետոյեան:

Ան հպարտութեամբ կը պատմէ, թէ թշնամիին ոտնձգութենէն մէկ օր չանցած, ողջ ազգը ոտքի կանգնեցաւ: Խօսակցութիւնը կը շարունակուի լուսանկարին մասին: Ի վերջոյ՝ հայր, որդի ու թոռնիկ կը ներկայանան այնտեղ՝ հայրենիքի պաշտպանութեան համար:



«Չեմ ալ ճանչնար զիրենք, այնտեղ ծանօթացած եմ իրենց, այդ նկարն ալ այնտեղէն ծնունդ առաւ, բայց մեր կապը շարունակուեցաւ: Արմենին հետ միայն կապ չունիմ, բայց յոյսով եմ, որ կ'ունենամ»:

Արմեն Գաբրիելեան Հայոց բանակի սպայ է, Վայքի շրջանէն, բայց փոքր տարիքէն Երեւան տեղափոխուած է, աւարտած է Վազգէն Սարգսեանի անուան ռազմական համալսարանը եւ այսօր ալ ապրիլեան դէպքերու ամենէն վտանգաւոր կետերէն մէկուն վրայ կը շարունակէ իր ծառայութիւնը: Օգտուելով Արմենին կարծատեւ արձակուրդի մէջ ըլլալու առիթէն, կազմակերպեցինք անոնց հանդիպումը լուսանկարի 3-րդ հերոսին՝ Չարգանդ Չաքարեանին տան մէջ:

Լուսանկարը ձեռքբերին, կը յիշէին այդ դժուար, բայց եւ իրենց ընկերութեան հիմքը դրած օրերը: Խօսելու շատ բան կայ, բայց հարցումներուն պատասխանողը առաւելաբար Արմենն է. աւագ ընկերները կ'ուզեն հասկնալ՝ արդեօ՞ք իրենց կարիքը ունին: Այդ օրերուն աւագ կռուողները երիտասարդները վտանգէն հեռու պահելու մասին կը մտածէին, իսկ երիտասարդները՝ մեծերը հեռու պահել կը փորձէին, որպէսզի անոնք իրենց քաջութեան վրայ կանկած չունենային:

«Արմենը, Արմենին նման երիտասարդները, զինուորները, փառք

ու պատիւ բոլորին, վախ չունէին: Անոնց միակ խօսքը, որ կը կրկնուէր՝ հոսպար, մենք Քեարամի վրէժը պետք է լուծենք», կը յիշէ ազատամարտիկ Չարգանդ Չաքարեանը:

«Ո՛վ, եթէ ոչ ես» սկզբունքով կռուի դաշտ մեկնած Չարգանդ հայրիկը կ'ըսէ, թէ ապացուցուած փաստ է, որ հայ զինուորը քաջ է:

«Ոչ մէկ կամար թող փորձէ ըսել, որ զինուորին պէս կրնայ տիրապետել գէղքին: Մեր զինուորը այսօր շատ հզօր է, որովհետեւ իր հորդը, ընտանիքը, մայրը պաշտպանելու կ'երթայ», կը յայտնէ Չարգանդ Չաքարեան:

Իր գործերուն մասին խօսիլ չսիրող Արմենը համաձայն է աւագ ընկերոջ այն գաղափարին, թէ հայրենիքը մանրուքներէն կը սկսի՝ բակին ծառէն, տունէն, հարազատներէն, ընկերներէն: Ան կը շեշտէ՝ անտարբերութեան պատճառով մեր հայրենիքին մեծ մասը կորսնցուցեր ենք արդէն, ալ ոչինչ ունիք յանձնելու:

«Բանակը ինծի համար միշտ է, որուն յետեւով ամեն վայրկեան կըրնամ պաշտպանել իմ տունը, իմ ընտանիքը, իմ ընկերները, հարազատները, ծանօթները», կ'ըսէ Արմեն Գաբրիելեան:

Բանակը կատարեալ չէ, միշտ ընելիք կայ, բայց Արմենը վստահ է՝ ոչ թէ պետք է նստիլ ու սպասել, այլ ներդրում ունենալ բանակաշինութեան մէջ: Ան կը յիշէ. «Ինչպիսի ոգեւորութիւն ապրեցանք, երբ ամենադժուար պահուն մեր թիկունքին ամբողջ ժողովուրդին սերն ու ոյժը զգացինք: Վերջիններուն մեր կողքի դիրքերը պահպանելու շնորհիւ ալ աւելի գօտեպնդուեցանք»:

Ապրիլը Արմենին մէջ շատ բան փոխած է՝ այդ ամէնը տեսնելէն վերջ, ան վերաբժեւորած է իր ունեցածը, այլ լեւ աւելի թեթեւակի կը նայի կեանքի դժուարութիւններուն:

Հրաժեշտէն առաջ, արդէն քաղաքացիական հազուստով, սահմանէն շատ հեռու, բայց իրար հանդէպ խոյն ջերմութեամբ կրկին կը լուսանկարուին: Արմենը քանի մը օրէն կը վերադառնայ առաջնագիծ՝ հաւատալով, թէ որեւէ դժուար պահու օգնութիւնը չ'ուշանար: Մենք ալ, մեր կարգին, բացիք մեծ հայր, հայր եւ որդի անունով ծանօթ լուսանկարի բոլոր փակագիծերը: Անոնք արիւնակից չեն, բայց այդպէս դարձած են գէղքով ու հայրենիքը պաշտպանելու կանչով: Ես ալ իրենց քոյր, աղջիկ եւ թոռնիկ:

Հայրենիքի պաշտպանութեան համար պատրաստ պետք է ըլլալ որեւէ գին վճարելու: Պատրաստ ենք: Երկու տարի առաջ, Ապրիլեան քառօրեայ պատերազմին, իսկապէս սուղ վճարեցինք՝ պաշտպանելու համար մեր հողը: Հրաշալի տղաք, երիտասարդներ, իրենց անմիջական հրամանատարներուն հետ, իրենց կեանքի գնով կասեցուցին դաւադիր ներխուժումը ու

իրականացնելու համար, նախ պետք է կարենանք վառ պահել Ապրիլեան քառօրեայ պատերազմին յաջորդող ազգային միասնական ու մարտական ոգին, ապա իւրաքանչիւրս պետք է Հայոց Բանակը ուժեղացնելու իր ներդրումը ունենայ. իշխանաւորները, պետութեան ղեկավարութիւնը՝ աւելի՛ ցցուն կերպով անհանդուրժողութիւն ցոյց տալով բանակին միջոցները իւրաց-



ետ մղեցին նենգ թշնամին:

Այսօր, ցաւով բայց հպարտութեամբ կը յիշենք մեր հերոսները, որոնք իրենց քաջագործութեամբ, իրենց գիտակից գոհաբերութեամբ նոր սերունդին պատգամեցին ոչինչ ինչպէս՝ գերագոյն արժէք հանդիսացող հայրենիքի պաշտպանութեան համար: Բայց, միայն գոհաբերութեան պատգամ չէր նահատակներուն փոխանցածը: Այդ երիտասարդները մեզի պարտականութիւն տուին աւելի՛ պատասխանատուութեամբ հետեւելու երկրի պաշտպանութեան գործին. անոնք անքննելի իրաւունքով մեզմէ կ'ակնկալեն, որ հայրենիքի սահմանները իրապէս անմատչելի դարձնենք:

Այդ պարտականութիւնը

նողներուն հանդէպ. իւրաքանչիւր անհատ, Հայաստան թէ արտերկիր ապրող՝ գտնելով լաւագոյն ձեւաչափը, ամենէն արդիւնաւետ ճանապարհը՝ իր անձնական մասնակցութեան բանակի հզօրացման աշխատանքներուն:

Սահմանային դիրքերու ամրապնդման, անոնց անառիկութեան նպաստելու միջոցները շատ են: Եթէ դժուարութեան հանդիպինք ու չկարենանք կողմնորոշուիլ, կրնանք ուղղակի դիմել համապատասխան կառոյցներու եւ հետեւիլ անոնց ցուցմունքներուն:

Մէկ բան յստակ է. ամէն ինչ պետք է ընել, որ երբեք, երբեք մեր տղաքը Ապրիլեան քառօրեայի նման անակնկալներու առջեւ չգտնեն իրենք զիրենք:

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍ**

Շէթանեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց մօր եւ հարազատին՝

**ՀԱՆԳՈՒՅԵԱԼ**

**ԱՇԽԷՆ ՇԷՅԹԱՆԵԱՆԻ**  
(Ծնեալ՝ ՎԱՐԴԱՆԵԱՆ)

մահուան սուգին:

Հանգուցեայի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 8 Ապրիլ 2018-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, Վիլլաներ - Հայէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին եկեղեցոյ ներքնասրահէն ներս:

«Մեր յարգելի ընթերցողներուն ուշադրութեան կը յանձնենք, թէ «Գանձասար»ի ցրուիչն է Յովիկ Բոշոյեան, որուն բքիշային հեռաձայնի թիւն է՝ 0955 519 613:

Չորեքշաբթի, 28 Մարտ 2018-ին, ՀՀ Դատախոսության 21-րդ Գերագույն ժողովի ընտրած Գերագույն Մարմինի անդամներին Արսեն Համբարձումյան, Արթուր Եղիազարյան, Արթուր Ղազարյան և Իշխան Սաղաթելյան մամուլյա սուսլիս մը տուին: Անոնք լրագրողներու հետ հանդիպումը սկսան՝ անոնց նուիրելով Սիմոն Վրացեանի «Հայաստանի Հանրապետութիւն» գիրքը:

ՀՀ Դատախոսութեան նորընտիր Գերագույն Մարմինի ներկայացուցիչ Արսեն Համբարձումյան յայտնեց, որ վերջերս գումարուած է Գերագույն ժողովը, որուն մասնակցած են անելիք 100 պատգամաւոր, ինչպէս նաեւ հրաւիրեալներ Իրանի, Բանատայի և ՀՀ այլ կառոյցներ:

«Գերագույն ժողովը քննարկած է Հայաստանի ներքին և արտաքին քաղաքականութիւնը, առկայ մարտահրաւերները, քաղաքական մարտահրաւերները, անդրադարձած կուսակցութեան գործունէութեան, ընդունուած են համապատասխան բանաձեւեր», տեղեկացուց ան:

Համբարձումյանի համաձայն, այդ բանաձեւերը ուղեկիշ պիտի ըլլան Գերագույն Մարմինի յառաջիկայ գործունէութեան համար: «Գերագույն ժողովը վերահաստատած է կուսակցութեան որդեգրած ուղեգիծը՝ իրականացնել աշխոյժ քաղաքականութիւն ընկերային մարզին մէջ, յատկապէս՝ աշխատատեղերու բացում, ժողովրդագրական աշխոյժ քաղաքականութեան իրականացման ուղղուած աշխատանքներ, պետութիւն-հասարակութիւն վստահութեան քայլերու կատարում և այլ կարեւոր խնդիրներ», ըսաւ ան:

Անդրադառնալով նորընտիր Գերագույն մարմինի կազմին՝ Համբարձումյան նշեց, որ անիկա կ'ընտրուի երկամեայ ժամանակահատուածով: «Նոր Գերագույն մարմինը բաղկացած է 9 հոգիէ՝ որոնցմէ 6-ն Նոր անդամներ են, որոնք տարբեր ժամանակահատուածներու ընթացքին աշխոյժ դերակատարութիւն ունեցած են կուսակցութեան մէջ», ըսաւ ան:

Ինչ կը վերաբերի Գերագույն Մարմինի կազմի լուրջ փոփոխութեան, Համբարձումյան դիտել տուաւ, որ անիկա պայմանաւորուած է շարք մը հանգամանքներով: «Դաշնակցական նախարարներն ու պատգամաւորները, որոնք Գերագույն մարմինի անդամներ էին, բազմազբաղ են: Գերագույն ժողովը կարեւոր նկատած է կազմակերպչական հարցերու կազմաւորումը. թէ՛ նախարարները, թէ՛ խորհրդարանականները երկու ճամբարով ծանրաբեռնուած կ'ըլլան, կարելիութիւն է՝ ըլլար աշխատանքները լիարժէք կատարելու: Որոշած ենք, որ այս ժամանակահատուածին աշխատանքներու վերակազմակերպման համար անելի նպատակայարմար կ'ըլլայ այս կազմը: Այսինքն՝ այսպէս անելի արդիւնաւետ կ'ըլլայ Գերագույն մարմինի ներկայացուցիչ Արսեն Համբարձումյանի անդրադառնալով այն հարցուոյն, թէ արդեօք կը համապատասխանեն իրականութեան մամուլին մէջ շրջանառուող այն լուրերը, թէ դաշնակցական պատգամաւոր Արուստեան Վարդանան պիտի նշանակուի նախարար, և այդ հանգամանքով պայմանաւորուած է Գերագույն Մարմինի կազմին փոփոխութիւնը:

### ՀՀ ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆՈՐԸՆՏԻՐ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ 6-Ը ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՆԴԱՄՆԵՐ ԵՆ, ԱՅՍԻՆՔՆ՝ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ

Գերագույն մարմինի աշխատանքը: Միեւնոյն ժամանակ չենք կաշկանդեր մեր ընկերները պաշտօնական պարտականութիւններու կատարումով», ըսաւ ան:

Ըստ Համբարձումյանի, Գերագույն Մարմինը ընտրուած է համախոհութեամբ՝ վստահութեան մեծ քուէով, ինչ որ յոյս կու տայ, որ յառաջիկայ երկու տարիներուն բոլոր առաջադրանքները կարենայ պատուով կատարել: «Գերագույն մարմինի անդամներէն 6-ն Դաշնակցութեան ուսանողական միութեան նախկին անդամներ են, այսինքն՝ Նոր սերունդի ներկայացուցիչներ», ըսաւ ան:

Նման օրակարգ ՀՀ-ն չունի, յայտարարեց ՀՀ-նորընտիր Գերագույն մարմինի ներկայացուցիչ Արսեն Համբարձումյան՝ անդրադառնալով այն հարցուոյն, թէ արդեօք կը համապատասխանեն իրականութեան մամուլին մէջ շրջանառուող այն լուրերը, թէ դաշնակցական պատգամաւոր Արուստեան Վարդանան պիտի նշանակուի նախարար, և այդ հանգամանքով պայմանաւորուած է Գերագույն Մարմինի կազմին փոփոխութիւնը:



«Ծանօթ եմ վերջին օրերուն տարբեր լրատուամիջոցներու մէջ կատարուած հրապարակումներուն: Ծատ դիրուրութեամբ մարդիկ կը նշանակէք պաշտօններու վրայ: Չկայ նման օրակարգ, ընկերներուն չընտրուիլը Նոր կազմին մէջ նման հանգամանքներով պայմանաւորուած է: Անոնք իբրեւ թեկնածու ալ առաջադրուած չեն եղած», ըսաւ ան:

Պատասխանելով այն հարցումին, թէ Գերագույն ժողովը գոհ է՞ մնացած նախկին Գերագույն Մարմինի աշխատանքներէն, Համբարձումյան ըսաւ, որ Գերագույն ժողովը նախորդ Գերագույն Մարմինի աշխատանքը գնահատած է բաւարար: «Ատիկա դժգոհութեան հետ պէտք է կապել», ըսաւ ան:

Պատասխանելով այն հարցումին, որ արդեօք Գերագույն Մարմինի կազմին փոփոխութիւնը պայմանաւորուած է այն հանգամանքով, որ ՀՀ-ն կաշկանդուած չըլլայ խորհրդարանին մէջ քննարկուող իշխանութիւնը, Համբարձումյան պատասխանեց. «ՀՀ-ն կաշկանդուող կուսակցութիւններէն է: ՀՀ-ն երբեք չէ կաշկանդուած, յառաջիկայ ալ պիտի չկաշկանդուի: ՀՀ-ն կաշկանդուող չէ կաշկանդուողը: ՀՀ-ն կաշկանդուող չէ կաշկանդուողը: ՀՀ-ն կաշկանդուող չէ կաշկանդուողը: ՀՀ-ն կաշկանդուող չէ կաշկանդուողը»:

ընդ, որ ՀՀ-ն կաշկանդուած չըլլայ խորհրդարանին մէջ քննարկուող իշխանութիւնը, Համբարձումյան պատասխանեց. «ՀՀ-ն կաշկանդուող կուսակցութիւններէն է: ՀՀ-ն երբեք չէ կաշկանդուած, յառաջիկայ ալ պիտի չկաշկանդուի: ՀՀ-ն կաշկանդուող չէ կաշկանդուողը: ՀՀ-ն կաշկանդուող չէ կաշկանդուողը: ՀՀ-ն կաշկանդուող չէ կաշկանդուողը»:

Ան յորդորեց՝ կատու չփնտռել մութ սենեակի մէջ, նման խնդիր չկայ: «Գերագույն Մարմինը ընտրուած է համախոհութեամբ, իսկ քաղաքական ուղղութիւնը մնացած է նոյնը: Չուտ ներքին կազմակերպչական իմաստով նպատակայարմար նկատուած է, որ կազմը եկեղեցուփոփոխութեան, իսկ սերնդափոփոխութիւնը այս իմաստով խրախուսելի է: Եթէ կ'ուզենք երբեւէ ինչ որ բան փոխել, ատիկա պէտք է ընենք դէմքերու փոփոխութեամբ, և այս առումով բաւական համարձակ որոշում տուած է Գերագույն ժողովը», ըսաւ Համբարձումյան:

Ան միեւնոյն ժամանակ յայտարարեց, որ ՀՀ-ի համաձայնական դաշինքին մաս կազմելը չի նշանակել, որ ՀՀ-ի գործողութիւնները պայմանաւորուած են ՀՀ-ի գործողութիւններով: «Գերագույն մարմինը միշտ եկեղեցուփոփոխութիւններու: Դուք չէք կրնար տեսնել դէպք մը, երբ Գերագույն մարմինին մէջ փոփոխութիւն եղած չըլլայ: Կը վստահեցնեմ, որ ներկուսակցական որեւէ խնդիր չկայ: Ատոր համոզուելու առիթ կ'ունենաք: ՀՀ-ն կը շարունակէ մնալ մէկ խումբ, ՀՀ-ն մէկ անձի կուսակցութիւն է՝ եղած, պիտի չըլլայ: Այս առումով ՀՀ-ն շահեկանօրէն կը տարբերի միւս կուսակցութիւններէն», յայտարարեց Համբարձումյան:

«Ձեր տեղեկատուութեան աղբիւրները հաստատ չեն», ըսաւ Արսեն Համբարձումյան՝ անդրադառնալով այն հարցուոյն, թէ արդեօք դաշնակցական նախարարական պաշտօններու փոփոխութեան հարց կա՞յ: «Դաշնակցութեան պարագային միակ հաստատ տեղեկատուութեան աղբիւրը կրնայ Գերագույն մարմինը ըլլալ և ես՝ իբրեւ Գերագույն մարմինի ներկայացուցիչ, ձեզի կը վստահեցնեմ, որ նման փոփոխութիւններու հարց մեր օրակարգին վրայ չունի», ըսաւ ան, ապա նշեց, որ «քաղաքականութեան մէջ որեւէ բան բացառուած չէ, և եթէ ըլլայ նման փոփոխութիւններու անհրաժեշտութիւն, ապա անոր մասին իրենք կը տեղեկացնեն»:

Ան նշեց, որ այս պահուն նման օրակարգ չունին և ըսաւ. «Մենք գործադիր իշխանութեան բարձրագույն օղակին մէջ աշխատող մեր երեք ընկերներու աշխատանքին գոհ ենք և այստեղ որեւէ խնդիր չենք տեսներ, հետեւաբար նաեւ փոփոխութեան անհրաժեշտութիւն չենք տեսներ»:

Համբարձումյան նաեւ անդրադարձաւ 2022 թուականի ընտրութիւններուն ՀՀ-ի մասնակցելու ձեւաչափին: «Դաշնակցութիւնը միշտ ալ ինքնավստահ գացած է ընտրութիւններուն, գացած է առանձին՝ իր յստակ օրակարգով: Կը կարծեմ՝ յաջորդ խորհրդարանական ընտրութիւններուն ժամանակ մենք անելի աւարդներ արձանագրելու կարելիութիւններ պիտի ունենանք», ընդգծեց ան:

Անոր համաձայն, ճիշդ է, Դաշնակցութիւնը երբեք չէ եղած գաղափարային կուսակցութիւն և չեն ալ ակնկալեր, որ մօտ ապագային կըրնայ դառնալ այդպիսին, բայց կազմակերպական կառոյցը գործունէութիւնը համար և անելի պատրաստ երթալու համար ընտրութիւններու, իսկալական ընելիք ունին, որուն ուղղութեամբ ալ աշխատանքներ կ'իրականացնեն:

Սահմանադրական բարեփոխումներու ջատագովը ըլլալով՝ ՀՀ-ն երբեք քաղաքական գարգացումները անձեռով չէ պայմանաւորած», ըսաւ Արսեն Համբարձումյան՝ անդրադառնալով վարչապետի պաշտօնին նախագահ Սերժ Սարգսեանը թեկնածութիւնը առաջադրելուն: «Մեզի համար կարեւոր են համակարգային փոփոխութիւնները, և իշխանութեան խնդիրը լուծուած է Ազգային ժողովի ընտրութիւններով: Կեղծ քաղաքական օրակարգ է վարչապետի թեկնածուի հարցին արձարծումը, քանի որ անիկա վերապահուած է քաղաքական մեծամասնութեան, և իբրեւ համաձայնական դաշինքի կողմ՝ մենք յարգանքով կը վերաբերինք քաղաքական գործընկերոջ կողմէ կայացած որոշումին»:

Անոր համաձայն, եթէ Սերժ Սարգսեան քաղաքական գործիչի մասին չունենային դրական մօտեցում՝ ամենայն հաւանականութեամբ դաշինքին մաս չէին կազմեր:

Անոր համաձայն, եթէ Սերժ Սարգսեան քաղաքական գործիչի մասին չունենային դրական մօտեցում՝ ամենայն հաւանականութեամբ դաշինքին մաս չէին կազմեր:

### Թուրքիոյ Տերիքի Միսկ Շայն

#### Ս. Գեորգ Եկեղեցիոյ Մեծ Յիսուսապետ Է Ս. ՉԱՏԻԿԱՆ

Շրջան մը առաջ 50 հայ ընտանիք ունեցող Թուրքիոյ Մարտին ևահանգի Տերիքի շրջանի միակ հայը Սուրբ Յարութեան տօնին այցելած է սուրբ Գեորգ Եկեղեցի:

«Հիւրընկալ»-ի համաձայն, 37 տարի առաջ Կ. Պոլիս տեղափոխուած Չաքարիա Սապունճուն 5 տարի առաջ Պոլիսէն հայրենի Տերիք վերադարձած է: Ան Ս. Յարութեան տօնին առանձին այցելած է Տերիքի հայկական Սուրբ



Գեորգ Եկեղեցի, հնչեցուցած է եկեղեցւոյ զանգը, մով վառած ու աղօթած: Եկեղեցիէն ելլելէն ետք, Չաքարիա Սուրբ Յարութեան տօնը երեխաներուն հետ յիշատակելու համար Պոլիս մեկնած է:

Կայքը դիտել տուած է, որ մինչեւ «1915 թուականի դեպքերը» Տերիքի մէջ կ'ապրէին բազմաթիւ հայեր, սակայն այժմ այնտեղ մնացած է միայն երեք հայ՝ Նայիֆ եւ Իւրշալին Տեմիրները, ինչպէս նաեւ Չաքարիա Սապունճուն:

«Այս եկեղեցին կառուցուած է 1650-ին: Մինչ... 1915 այստեղ ունեցած ենք 7 հայկական եկեղեցի եւ երեք դպրոց: Այդ դպրոցներուն մէջ կ'ուսուցանուէր օսմաներէն, հայերէն եւ ֆրանսերէն: Այդ տարիներուն Տերիք կ'ապրէր շուրջ 1750 հայ, իսկ հիմա մնացած ենք երեքս: Երբ տեղափոխուեցայ Պոլիս, սկսայ աշխատիլ պապենական գործով՝ օճառի արտադրութեամբ: Վաղուան Չատիկին տօնը այսօր կը յիշատակեմ, քանի որ պէտք է վերադառնամ Պոլիս՝ ընտանիքիս հետ տօնելու Չատիկը», յայտնած է Չաքարիա Սապունճուն:

### Նշմար

## ՈՃՐԱԳՈՐԾ ՄԵՏԱԼԱԿԻՐՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ ԽՕՍԲԻ ԱՃՈՒՐԴ



Ս. Մահտերճեան


Աշխարհի հզօր ու նուազ հզօր պետութիւններու վարիչները տարօրինակ մրցակցութեան մը մէջ են ու կը փորձեն գիրար գերազանցել այլախաղակութիւններով, սակայն կըրնանք անվարան ըսել, որ Թուրքիոյ Նախագահը եւ անոր գործակիցները կրնան խլել ոսկեայ, արծաթեայ ու պրոնզեայ մետալները, աչք ունին նաեւ թիթեղեայ եւ կերպրնկալէ մետալներու, իբրեւ գլխաւոր մրցակից ունենալով Իսրայէլի պետական պատասխանատուները:

Պաղեստինցիք անցեալ Ուրբաթ օր, 30 Մարտին, շղթայագերծեցին պահանջատիրական պայքարի Նորագոյն ալիքը, «Հողի օր»-ուան առիթով, յայտարարելով, որ ցուցական երկարաշունչ արարքներու պիտի դիմեն: Գլխաւոր բեմը եղաւ Կազայի սահմանագիծը: Իսկան բազմաթիւ զոհեր, բազմահարիւր վիրաւորներ, որովհետեւ, ըստ սովորութեան, պարսատիկներով ու քարերով կռուի դաշտ իջած պաղեստինցիները անգամ մը եւս իրենց դիմաց գտան իսկական փամփուռ շտ, գրահապատներ ու իրասայլեր գործածող իսրայէլեան բանակայինները, որոնց համար նման ոճիրներ գործելը մաս կը կազմէ վերը յիշուած մերօրեայ այլախաղակութիւններուն, եւ որոնք «այդպէս ալ պէտք է ըլլայ» տրամաբանութեամբ կը դիտուին աշխարհի հզօրներուն ու անոնց կամակատար մամուլին կողմէ:

Եւ յանկարծ, Երտողան դարձեալ իրապարակ նետուեցաւ պաղեստինցիներուն պաշտպանի պատմութեամբ, անմարդկային եւ ոճրագործ անուանեց Իսրայէլի վարչապետ Նեթանիահուն, որ «տակը չմաց» եւ Երտողանի երեսին տուաւ քիւրտեր եւ ընդդիմադիրներ ջարդելու-մաքակոծելու անոր վարքագիծը: Արդիւնքը այն եղաւ, որ խօսքի այս աճուրդին շնորհիւ, աշխարհը ականջալուր եղաւ երկու ճշմարտութիւններու իրապարակման, որուն համար երկուքն ալ արժանի են արիւնտ մետալներու:

Առանց աչքաթող ընելու Իսրայէլի պետական պատասխանատուներուն անկարելի ինքնարդարացումները, պահ մը կեղորոնանանք Երտողանի կեցուածքին վրայ: Ահա-ասիկ ան անգամ մը եւս արաբական աշխարհին կը ներկայանայ պաղեստինցիներու դատին պաշտպանի «բարձունք»-էն, մինչդէռ արաբական աշխարհը գիտէ, պէտք է՝

մոռնայ, որ Թուրքիա, երկուան ու այսօրուան Թուրքիան ոճիրներ գործած է նա՛եւ արաբական երկիրներու դէմ: Աշխարհ ու արաբական երկիրները պէտք է իրենց ականջներն ու աչքերը լայն բանան Երտողանի այն յոխորտանքին դիմաց, թէ այսօրուան Թուրքիան շարունակութիւնն ու ժառանգորդ է Օսմանեան սուլթանութեան: Այս հաստատումին, խոստովանութեան իսկ մէջ պէտք է տեսնել Երտողանի Թուրքիոյ այն յաւակնութիւնները, որոնք կը ձգտին հողեր խլել Սուրիայէն, Իրաքէն, զանոնք գումարելու համար Հայաստանէն, Կիպրոսէն ու Յունաստանէն խլուած հողերուն վրայ: Աշխարհն ու արաբական աշ-



Լեզուով պաղեստինցիներուն հետ է, զրպանն ու սիրտը՝ Իսրայէլի հետ

խարհը նաեւ պէտք է անտարբեր դիտողի դիրքին վրայ մնան, երբ ամէն օր ականատես կ'ըլլան քիւրտերու ջարդերուն, որոնք կը կատարուին ուղղակի թրջական բանակին կողմէ, կամ՝ եզիպտներու ջարդերուն, որոնք տեղի ունեցան Իրաքի մէջ, Նոյնիքն թրջական դրածոյ «ծայրայեղական ուժեր»-ու կողմէ: Տակաւին, պէտք է յստակօրէն թրջական բեմադրութիւն տեսնել Եգիպտոսի ու Լիպիոյ մէջ «ծայրայեղականներու» արարքներուն մէջ, իսկ վաղը, նման դերակատարութեան կրնան վերակոչուիլ Դամասկոսի մօտակայ շրջաններէն հեռացուած ու Թուրքիոյ դրացութեան մէջ համախմբուած ոճրագործ խմբակներուն, որոնք այլապէս աշխարհին կը ներկայացուին Սուրիոյ իշխանութիւններուն ընդդիմադիրի պատմութեամբ, իսկ անոնց յելուգակութիւններուն ականատես եղանք Զեսապի, Հայէպի, Տեր Չօրի, Արաբունարի, Աֆրինի մէջ եւ այլուր...

Այս ու նմանօրինակ աղաղակող այլախաղակութիւններու ի տես, կ'արժէ՞ մտածել, որ Անգարա իր այցելութեան առիթով՝ Փութին քայլ մը պիտի առնէ մետալներ խլելու Երտողանէն, կամ՝ նման քայլի մը կրնան դիմել Թրամփի եւ Փութին, աշխարհը երեւութապէս տակն ու վրայ ընող դիւանագիտական փոթորիկէն ետք ծրագրուող հանդիպումին...

ՍՕ ԽԱԶԻ ԸՐԶ. ՎԱՐՉՈՒԹԻՆ

ԱՌՈՂՋԱՊԱՅՎԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄ

Կազմակերպութեամբ  
ՍՕ Խաչի Առողջապահական Յանձնախումբին

**ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՔ**

9 Ապրիլ 2018-էն սկսեալ, «Լ. Շանթ» սրահէն ներս  
Երկուշաբթի, Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերը,  
ժամը 4:00-էն 5:30  
Արձանագրութեան համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.-  
Դարմանատուն՝ 4644947-Բջիջային՝ 0937 021 985

ՍՕ ԽԱԶԻ ԸՐԶ. ՎԱՐՉՈՒԹԻՆ

ՁԵՈՎՐՈՒԵՍԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄ

Կազմակերպութեամբ  
ՍՕ Խաչի Ձեռարուեստի Յանձնախումբին

**ՁԵՈՎՐՈՒԵՍԵՐՈՒ ԴԱՍԸՆԹԱՅՔՆԵՐ**  
(Լասէի, ասեղնագործութեան, ուրֆայի, վանի, կարպետի, նորվեկեանի, մաքուկի, բուրդի, եւ տանդէլ պրուրոնի)

Դասընթացքները տեղի պիտի ունենան առաւօտուն «Լ. Շանթ» սրահէն ներս: Արձանագրութեան համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 4641884 - 0944-641258:

ԿՈՉԱԿԱՆ

Արմենակ եղիայեան

Ստորեւ թաւ գիրերով ներկայացուած բոլոր բառերը կոչական են: Պէտք է ուշադիր կարդալ օրինակները, թափանցել անոնց խորը եւ ընտելանալ այս կիրարկութեանը խնայելու համար ամօթալի սխալագրութիւններու հեղեղը, որ ընդհանուր է արեւմտահայուն: Պէտք է գայն ճանչնան յատկապէս խմբագիրները, ուսուցիչները, գրագետները, մանաւանդ... հայագիտութեան վեղարաւոր ու անվեղար դոկտորները եւ հասարակ մահկանացուներն ալ անշուշտ:

- Աշխարհաբար օրինակներ
Սխալ օրինակ՝
\*\*\* «Արքայ արթնցի՛ր»:
Պէտք է ըլլայ՝ «Արքայ՛, արթնցի՛ր»:
Ճիշդ օրինակներ՝
\*\*\* Կոռ՛նկ, ուստի՞ կու գաս, ծառայ եմ ձայնիդ...:
\*\*\* Կանչէ՛, կռու՛նկ, կանչէ՛:
\*\*\* Լորի՛կ, լորի՛կ, այս տարի արտս ցաներ եմ գարի:
\*\*\* Անձրե՛ւ, անձրե՛ւ, ցա՛ծ արի, բուսցո՛ւր ցորեն ու գարի:
\*\*\* Կ՛անձրեւէ, տղա՛ս, աշունը թաց է (ՎԹ):
\*\*\* Յառա՛ջ, ընկերնե՛ր, դէպի յաղթանակ:
\*\*\* Չայն տուաւ Սօսէ. «Սերո՛ք քան», - հոս է...:
\*\*\* Զեզ, հայ՛ լեզու, կը սիրեմ մրգաստանի մը նման(ՎԹ):
\*\*\* Ես քեզ երբեք չեմ մոռացել, իմ հարազատ հայրենի՛ տուն, ... (Սարմէն):

- \*\*\* Ահա հանգիստ հող կը մտնեմ,
Յոյսս դուք եք, ընկերնե՛ր...
\*\*\* Դու գո՞վ խնդրես, մա՛յր իմ անուշ,
Ե՛կ, մի՛ դողար, մօտեցի՛ր հոս... (ՄՊ):
\*\*\* Բարի՛ եկած եք մեր քաղաքը, Աբիսողո՛մ աղա, ... (ՅՊ):
\*\*\* Է՛հ, մնաք բարով, Աստուա՛ծ եւ արե՛ւ, որ կը պլպլաք... (ՊԴ):
\*\*\* Լեռնե՛ր, լեռնե՛ր հայրենի, անմահական դէխներ,
Որոնց արփին կը դնէ թագ, իսկ արեւն ալ՝ պատմուճան... (ԴԿ):
\*\*\* Ա՛խ, մնաք բարով չեմ ասում ես ձեզ,
Իմ հօ՛ր գերեզման, օրօ՛ցք մայրական,
Իմ հոգին յաւերժ խռով է ձեզ հետ,
Հայրենական՝ յարկ, յուշե՛ր մանկական (ԱԻ):
\* \* \*

- Գրաբար օրինակներ
\*\*\* Կեցո՛, ՏԷ՛ր:
\*\*\* Հա՛յր մեր, որ յերկինս ես...:
\*\*\* ՏԷ՛ր, ողորմեա՛:
\*\*\* Կեցո՛, ՏԷ՛ր, եւ ողորմեա՛:
\*\*\* Դա՛տ արա ինձ, Աստուա՛ծ, եւ իրա՛ւ արա ինձ ի դատաստանի իմում:
\*\*\* Փա՛ռք քեզ, ՏԷ՛ր Աստուած մեր, որ պարգեւեցեր զօրս այս բարեաւ:
Բայց՝ «Փա՛ռք Աստուծոյ», - այստեղ կոչական չկայ:
«Փա՛ռք Յօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, ամէն...», - նմանապէս:
\*\*\* Նայեա՛ց սիրով, Հա՛յրդ գթած, ի քո ստեղծեալ գործս ձեռաց...:
\*\*\* Երկի՛նք եւ երկի՛ր, եկէք-ողբացէք եղկելի գանձն իմ:
\*\*\* Զրիստո՛ս, որդի՛ Աստուծոյ, անոխական՛լ եւ բարեզո՛ւթ, գթա՛ արարչական քո սիրով...:

- \*\*\* ՏԷ՛ր ամենակալ Աստուած Աբրահամու, Իսահակայ, Յակոբայ եւ զաւակաց նոցա արդարոց, ... թո՛ղ զմեզս մեր:
\*\*\* Երկի՛նք եւ երկի՛ր,
Եկա՛յք, ողբացէ՛ք
Եղկելի գանձն իմ:
\*\*\* Առա՛ծ տ լուսոյ,
Արեգա՛կն արդար,
Առ իս լո՛յս ծագեա:
\* \* \*

Քերականօրէն՝ կոչականը նախադասութեան միւս անդամներուն չի կապուիր, այս պատճառով ալ գայն ձախէն ու աշէն կը տրոհենք միւս բառերէն: Ան միշտ կը շեշտուի, որովհետեւ զգալիօրէն անելի ուժգին կ'արտասանուի: Կրնայ գտնուիլ նախադասութեան սկիզբը, մէջտեղը կամ վերջը: Օրինակ՝
Արա՛, ինչո՞ւ այսքան ուշացար:
Ինչո՞ւ, Արա՛, այսքան ուշացար:
Ինչո՞ւ այսքան ուշացար, Արա՛:
Դպրոցներուն մէջ կոչականի ուսուցումը պէտք է սկսիլ նախակրթարանի Բ. դասարանէն եւ շարունակել ու գարգացնել գայն մինչեւ ԺԲ. դասարան: Դասագիրքերն ալ պէտք է պատրաստուած ըլլան այս տրամաբանութեամբ: Այլապէս կը շարունակենք մնալ ի՞նչ, ուր այսօր կը գըտնուիլք: Ողբալի կացութիւն մը կը պարզեն յատկապէս մեր հոգեւոր բնագրերը՝ շարականները, պատարագամատոյցը, ժամագիրքերը եւ այլ հրատարակութիւններ:

Նշմար

ՍՐԲԱՊԱՏԿԵՐՆԵՐ

Կրօնական գանազան տօներու առիթով դիմատետրը կ'ողողուի սրբապատկերներով եւ մաղթանքներով, այդ պատկերներուն հոսքը կը պարտաւորեցնէ ստացողը, որ ինք ալ, իր կարգին, փոխադարձէ նոյնանման նկարագարող մաղթանքներով:

Թէ որո՞նք են այս նկարներուն հեղինակները, յստակ չէ, քանի որ անոնք որեւէ ստորագրութիւն չեն կրեր, սակայն, յստակ է, որ կազմակերպուած գործ է, գեղարուեստական միջամտութեամբ: Անոնք երբեմն օտարալեզու են, երբեմն արեւելահայերէնով, երբեմն ալ՝ արեւմտահայերէնով, ինչ որ մտածել կու տայ, թէ ո՛ւր պատրաստուած են եւ որոնց հասցեագրուած են:

Ես չեմ ուզեր ծանրանալ անոնց ծնունդին, ուղղութեան եւ նպատակին վրայ, քանի որ գիտ անելի կը հետաքրքրէ գանոնք իւրացը-տողներու վերաբերմունքն ու նկարագիրը:

Օրէնքով, երբ մարդու մը կողմէ որեւէ նկար կամ մաղթանք կը բաշխուի ուրիշներու, այդքոյց կու տայ որ ուղարկողը հաւատացած է անոնց եւ իւրացուցած է պատգամը ու իր կարգին, կ'ուզէ որ ուրիշներ ալ ստանան եւ վայելեն: Սակայն գանոնք ստանալու եւ կրկին ուղարկելու մեքենայացուած ձեւը, չի վկայեր ուղարկողին նկարագրին. անոր հաւատացեալ ու բարեպաշտ ըլլալուն մասին:



Ամեն ինչ մեքենայացուած է այս դարուս՝ յանուն դիւրութեան, արագութեան եւ ժամանակի խնայողութեան, սակայն սրբապատկերներու պարագային անհրաժեշտ է վայրկեան մը կանգ առնել ու հարց տալ՝ արդեօք այս նկարներն ու տեսահոլովակները ուղարկողները իրենք իսկապէս կը հաւատա՞ն նկարին խորհուրդին, թէ առանց մտածելու կ'ուղարկեն: Այդ անձերը իրենց վարք ու բարքով իսկապէս «քրիստոնէա՞յ» են, (Այստեղ քրիստոնէան կրօնական իմաստով չեմ գործածեր), այսինքն բարի, ուղղամիտ ու առաքիլի՞ են:

Այս շատկուան, դիմատետրով ինծի հասած նկարները այնքան խայտաբղետ էին, որ եթէ գանոնք քով-քովի շարեի, տարօրինակ ցուցահանդէսի մը տպաւորութիւնը պիտի ստանայի՝ Յիսուսի Յարութեան նկարին քով, յանկարծ Յիսուսի Ծնունդ, «Ջրիստոս յարեալ Ի մեռելոց»-ին քով «Ջրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»... եւ անշուշտ գունագեղ հակիրթներու տարատեսակ գարդարանքներ՝ նապաստակներ ու ճուտիկներ, շարժուն ու անշարժ, խօսքով ու երաժշտութեան ընկերակցութեամբ կամ անձայն:

Ի՞նչ հարկ կայ մտածելու, թէ ինչ գրելու է որպէս մաղթանք, ինչպէ՞ս գրելու է, որ գեղեցիկ ինչէ ու անսխալ ըլլայ: Ինչո՞ւ այս գլխացաւին ենթարկուիլ, երբ արուեստագետ, հմուտ անձեր քեզի գեղեցիկ, պատրաստ ու անվճար նիւթ կը տրամադրեն. ընտրէ ուզածդ եւ դրկէ ուզածիդ եւ ուզածներուդ: Պատրաստի հագուստ, պատրաստի ճաշեր կ'ըլլան ալ, ինչո՞ւ պատրաստի մաղթանք չըլլայ:

Կը մտածեմ՝ արդեօք այդ սրբապատկերները ուղարկողներն քանի՞նչ են եղեցի կը յաճախէ, անոնցմէ քանի՞նչ են եղեցեւոյ դրան կանգնած մուրացկաններուն ողորմութիւն կու տայ, անոնցմէ քանի՞նչ մեկու մը վիրաւորել է տք անմիջապէս ներողութիւն խնդրած է, կամ հիւանդի մը այցելած է ու գայն մխիթարած խօսքով եւ կամ նուերով մէկը ուրախացուցած ...

Այս բարեմասնութեանց շարքը կարելի է երկարել, սակայն ամփոփելով հարց տամ բարի՞ ենք, բարութիւն ըրա՞ծ ենք: Ինքնաքննութիւնը շատ կարեւոր է, մենք մեր անձը քննութենէ անցընենք, ապա գործենք, թէ ոչ այդ սրբապատկերները իմաստագուրկ նկարներ կը դառնան:

Յակոբ Միքայէլեան

## ԴԻՄԱՏԵՏՐԸ ՅՈՒՅԱՄՈՒԼՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՐ



Պեթի Բիլերճեան

Ապրիլ ամիսը դիմաւորեցինք Յիսուս Քրիստոսի հրաշափառ Ս. Յարութեան տօնով: Ամենուրեք բարեմաղթութիւններ եւ շնորհաւորանքներ, այնքան մը, որ նոյնիսկ դիմատետրի էջերուն հիմնական բաժինը գրաւած են անոնք ու փոխարինած քաղաքական շարք մը լուրեր: Մարտ ամիսը չնեղուի պահ մը, ան գերագանցած էր Ապրիլը իր շնորհաւորանքներով՝ Կանանց, Ուսուցչաց, Մայրերու, Ծաղկազարդի տօներուն առիթով...

Այս ամսուան մեր կարդացած է կամ ստացած շնորհաւորանքները այնքան շատ էին, որ բաւարար կը նկատուէին կեանք մը ամբողջ առանց բարեմաղթութիւններու ապրելու: Շնորհաւորանքներ ստացանք հեռու- մօտիկ բարեկամներէ, ծանօթներէ ու երբեմն ալ անծանօթներէ: Սակայն նշմարելին այն էր, որ այս շնորհաւորանքները մնացին միայն էլեկտրոնային պաստառի տեսքով, չկրցան թափանցել մեր հոգիներէն ներս, որովհետեւ հոն կը բացակայէր աչքերու կապը:

Շնորհաւորանքները մէկ կողմ դրած, ուշադրութիւնդ երբեմն կը կեդրոնանայ դիմատետրի էջերուն վրայ տեղադրուած նկարներուն, որոնք երբեմն զգուելի կը թուին իրենց մանրամասնութիւններով: Դիտելով այդ նկարները կրնաս յագուրդ տալ «հետաքրքրութիւններուդ», կրնաս իմանալ թէ այսինչը կամ այնինչը ո՞ր մեկնած է, որո՞նք ընկերակցութեամբ, ի՞նչ հագած է, ի՞նչ կ'ուտէ, ի՞նչ կը խմէ... Մանրամասնութիւններ, որոնք իրականութեան մէջ երբեք չեն հետաքրքրեր ուրիշը: Այս բոլորը այնքան անձնական են, որ անիմաստ է գանոնք տեղադրել ու ցոյց տալով մարդոց՝ գոհանալ: Դրական ի՞նչ բան կայ այս ցուցադրութեան մէջ: Չո՞վ կը հետաքրքրեն մարդոց խիստ անձնական այցելութիւններն ու ճաշկերոյթները:

Այս բոլորին մէջ, սակայն, նոյն օրերուն, ուշադրութիւնս գրաւեց երկու վերնագիր. առաջինը՝ Սուրիոյ Առաջին Տիկնոջ Ասմա ալ Ասատի այցելութիւնը Դամասկոսի յոյն կաթողիկէ Մար Դուլոս վանքի որբերուն եւ ծերերուն՝ Ս. Յարութեան տօնին առիթով, երկրորդը՝ ՆԱՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոսին հաւկթախաղը՝ Ս. Չատիկի նախօրէին, երիտասարդ ուսանողներուն հետ:

Կու վերնագիր. առաջինը՝ Սուրիոյ Առաջին Տիկնոջ Ասմա ալ Ասատի այցելութիւնը Դամասկոսի յոյն կաթողիկէ Մար Դուլոս վանքի որբերուն եւ ծերերուն՝ Ս. Յարութեան տօնին առիթով, երկրորդը՝ ՆԱՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոսին հաւկթախաղը՝ Ս. Չատիկի նախօրէին, երիտասարդ ուսանողներուն հետ:


Չոյգ անձնաւորութիւններն ալ մէկդի դրած իրենց պաշտօնն ու դիրքը, առաջինի նպատակի մը կը ծառայէին: Անոնք այս արարքով համ է ս տ ու թ է ա ն օ թ ի ն ա կ ը



կու տային մատղաշ սերունդին: Համեստութիւնը Աստուծոյ կողմէ տրուած շնորհք մըն է: Համեստ մարդիկ չեն օգտագործեր իրենց ապրելաձեւը գովասանք փնտռելու կամ ուշադրութիւն գրաւելու համար: Համեստ մարդիկ հեռու կը մնան ցուցամոլութենէ, որ մեր դարու վարակիչ ախտերէն մէկն է:

Կարելի է յիշել նաեւ, թէ ինչպէ՛ս պատերազմի օրերուն եւ մինչեւ օրս գաղութի գաւակներուն տրամադրուած օժանդակութիւնները դիմատետրի էջերուն վրայ կը ցուցադրուէին ու կը ցուցադրուէին: Նպատակը օգնութիւնն է, թէ ցուցամոլութիւն: Չէ որ Աւետարանին մէջ յիշուած է. «Աջ ձեռքդ թող չիմանայ»:

Այսօր, մենք, մեր ապագայ սերունդին օրինակ պիտի ծառայենք: Իսկ եթէ մենք կրողն ենք նման ախտերու, ուրեմն փորձենք բուժուիլ անոնցմէ նախքան սերունդներ վարակելը: Եթէ մենք ընկղմած ենք ցուցամոլութեան ճահիճին մէջ ու դուրս չենք կրնար գալ հոնկէ, գոնէ փորձենք մեր գաւակները հեռու պահել այդ հիւանդագին սովորութենէ:



Հայկաի քաղաքին մարզական կեանքէն ներս, ֆութպոլի սիրահարներուն համար սովորութիւն դարձած էր ՀԱՍԱ-ի Հայկաի ներկայացուցչական խումբին ծախ յետսապահ Մանուկ Յովհաննէսեանը «Մուխը Մարէ Մանուկ» կոչել: Թէեւ շատերը չէին գիտեր, թէ այս «Մուխը Մարէ» յորջորջումը ուրկէ՛ ուր

կան յատկութիւններու միջամտութեան վրայ: Մանաւանդ տրիպլընտը իր ոճը այնքան կարճ ու անակնկալ էր, որ կարծես գնդակը մագնիսուած էր իրեն ու կ'երթար իր ետեւէն:

1943 թուականն էր: Հայկաի քաղաքապետութեան բաժակի գծով իրարու դէմ պիտի մրցէին



ՀԱՍԱ-ի եւ Իւնիոն Սփորթիվի ֆութպոլի կազմերը: Մրցումը տեղի պիտի ունենար ՀԱՍԱ-ի Ազգիկի թիմերու դաստիարակչութեան վրայ: Մրցումէն առաջ, հանդերձարաններէն ներս, երբ խաղը սկսելու իրենց պատասխանատուներուն վերջին թելադրանքները կը ստա-

նային, ՀԱՍԱ-ի պատասխանատունն՝ եղբ. Լուտեր Մասապանաճեանը մէկ կողմ կը կանչէ խումբին յետսապահ խաղող Մանուկ Յովհաննէսեանը ու կը սկսի պատուէր տալ անոր: Այստեղ խօսքը կու տանք Մանուկին.

«Երբ եղբ. Լուտերը զիս հեռացուց խումբէն, տպաւորութիւնս այն եղաւ, որ խաղարկութեանս շուրջ թելադրանքներ պիտի ընէ, բայց անակնկալի եկայ, երբ ան բոլորովին այլ հարցով ու այլ շեշտով սկսաւ իր խօսքը: Եղբայր Մանուկ զիս լաւ մտիկ ըրէ, այսօր մրցումին գըլխաւոր պարտականութիւնը պիտի ծանրանայ ուսերուդ վրայ, որովհետեւ խաղին ճակատագիրը առաւելաբար կախուէալ պիտի ըլլայ քեզմէ: Եթէ դուն կարենաս լաւ կատարել վրադ դրուած պարտականութիւնը այն ատեն մեր յաղթանակը շատ հաւանական կը դառնայ: Ուստի.

1940-ական թուականներուն, Հայկա քաղաքի ֆութպոլի կեանքէն ներս Իւնիոն Սփորթիվ կոչուող ֆութպոլի խումբը տիրական ոյժ մըն էր: Մանաւանդ պայքարը սուր էր երկուքին միջեւ: Իւնիոն Սփորթիվի կազմէն կը խաղային Արտաւազը, Աբրահամ, Ապտալլա Թաուիլ, Ֆէթթուհ, Ահմէտ Ճումա եւ ուրիշներ: Այդ շրջանին, երբ Սուրիոյ եւ Լիբանանի մէջ դեռ արհեստավարժ խումբեր չկային, ի մտի ունինք միայն Դամասկոսի գիւնտարական խումբը, Արտաւազը Մարութեան մեծ ժողովրդականութիւն ունէր եւ կը վարձատրուէր իր խաղերուն համար:

«Երբ եղբ. Լուտերը զիս հեռացուց խումբէն, տպաւորութիւնս այն եղաւ, որ խաղարկութեանս շուրջ թելադրանքներ պիտի ընէ, բայց անակնկալի եկայ, երբ ան բոլորովին այլ հարցով ու այլ շեշտով սկսաւ իր խօսքը: Եղբայր Մանուկ զիս լաւ մտիկ ըրէ, այսօր մրցումին գըլխաւոր պարտականութիւնը պիտի ծանրանայ ուսերուդ վրայ, որովհետեւ խաղին ճակատագիրը առաւելաբար կախուէալ պիտի ըլլայ քեզմէ: Եթէ դուն կարենաս լաւ կատարել վրադ դրուած պարտականութիւնը այն ատեն մեր յաղթանակը շատ հաւանական կը դառնայ: Ուստի.

«Մանուկ, այսօր դուն Արտաւազին մուխը պետք է մարես: Այսօր դաշտին վրայ Արտաւազը որպէս խաղող պետք է գոյութիւն

«Մանուկ, այսօր դուն Արտաւազը խումբէն հեռացուց, որովհետեւ խաղարկութեանս շուրջ թելադրանքներ պիտի ընէ, բայց անակնկալի եկայ, երբ ան բոլորովին այլ հարցով ու այլ շեշտով սկսաւ իր խօսքը: Եղբայր Մանուկ զիս լաւ մտիկ ըրէ, այսօր մրցումին գըլխաւոր պարտականութիւնը պիտի ծանրանայ ուսերուդ վրայ, որովհետեւ խաղին ճակատագիրը առաւելաբար կախուէալ պիտի ըլլայ քեզմէ: Եթէ դուն կարենաս լաւ կատարել վրադ դրուած պարտականութիւնը այն ատեն մեր յաղթանակը շատ հաւանական կը դառնայ: Ուստի.

Արտաւազը ունէր ֆութպոլիստի մը համար անհրաժեշտ գրեթէ բոլոր յատկութիւնները: Մանաւանդ ան շատ խելացի ու խորամանկ խաղող մըն էր, երբ հակառակորդին բերդին առջեւ, նեղ պարագաներու մէջ, երբ հակառակորդ յետսապահներով շրջապատուած կ'ըլլար, գիտէր ստեղծել ու իրացնել հանդիսականը: Անոր հասակը, ֆիզիկական կազմը տեղին էին, բայց իր նուրբ խաղը, իր թաքցիքը բացարձակօրէն յետուած էին ֆիզիքա-

«Մանուկ, այսօր դուն Արտաւազը խումբէն հեռացուց, որովհետեւ խաղարկութեանս շուրջ թելադրանքներ պիտի ընէ, բայց անակնկալի եկայ, երբ ան բոլորովին այլ հարցով ու այլ շեշտով սկսաւ իր խօսքը: Եղբայր Մանուկ զիս լաւ մտիկ ըրէ, այսօր մրցումին գըլխաւոր պարտականութիւնը պիտի ծանրանայ ուսերուդ վրայ, որովհետեւ խաղին ճակատագիրը առաւելաբար կախուէալ պիտի ըլլայ քեզմէ: Եթէ դուն կարենաս լաւ կատարել վրադ դրուած պարտականութիւնը այն ատեն մեր յաղթանակը շատ հաւանական կը դառնայ: Ուստի.

«Մանուկ, այսօր դուն Արտաւազը խումբէն հեռացուց, որովհետեւ խաղարկութեանս շուրջ թելադրանքներ պիտի ընէ, բայց անակնկալի եկայ, երբ ան բոլորովին այլ հարցով ու այլ շեշտով սկսաւ իր խօսքը: Եղբայր Մանուկ զիս լաւ մտիկ ըրէ, այսօր մրցումին գըլխաւոր պարտականութիւնը պիտի ծանրանայ ուսերուդ վրայ, որովհետեւ խաղին ճակատագիրը առաւելաբար կախուէալ պիտի ըլլայ քեզմէ: Եթէ դուն կարենաս լաւ կատարել վրադ դրուած պարտականութիւնը այն ատեն մեր յաղթանակը շատ հաւանական կը դառնայ: Ուստի.

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍ**

*Մելքոնեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝*

**ՀԱՆԳՈՒՅԵԱԼ**

**ԱՐԵՏԻՍ ՄԵԼՔՈՆԵԱՆԻ**

*մահուան սուգին:*

**Հանգուցեայի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 15 Ապրիլ 2018-ին, յաւարտ Ս. Եւ Ամմահ Պատարագի, Ս. Գրիգոր Լուսաւորիչի Եկեղեցոյ մէջ, Նոր Գիւղ - Հայկա:**

**Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին Եկեղեցոյ ներքնասրահէն ներս:**





ԹՈՒՐՔ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ՊՈՍՊԻՈՅԻ ՇՐՋԱՆԻՆ



Սարգիս Գասարյան

Թեև դժուար է կանխատեսել ամերիկացի դիվանագետներուն երկակի եւ երբեմն հակասական չափանիշերը՝ անոնց պաշտոնավարութենէն առաջ եւ վերջ, սակայն շարք մը գործօններ մեզի պատկերացում մը կրնան տալ նախկին ԱՄՆ-ի գաղտնի սպասարկութեան տնօրէնին, նորընտիր արտաքին գործոց նախարարին որդեգրելիք քաղաքականութեան մասին:

Նախկին գլխուորին, նոր դիվանագետին արտաքին աշխարհին ուղղուած առաջին ուղերձը հասաւ ԱՄՆ-ի թուրք դաշնակիցէն, երբ թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մաուլուտ Չաոււշ Օղլոյ իր երկրին կեցուածքը պարզաբանեց՝ կոչ ուղղելով Պոմպիոյի, որ երկու տարի առաջ թուրքիոյ վրայ Երտողանին դէմ արտայայտուած էր, յարգելու թուրքիան: Ինչ որ երեւան կը բերէ Անգարայի մտահոգութիւնը Պոմպիոյի ԱՄՆ-ի արտաքին գործոց նախարարի պաշտօնը ստանձնելուն առիթով, թուրք-ամերիկեան յարաբերութիւններու բարելաման յոյսերուն վերածաղկումին հետ միատեղ: Նախորդ օրերուն, ԱՄՆ-ի նախագահը թուրքիոյ վրայ յայտարարեց թեւըրսընը պաշտօնագուրկ ընելու մասին: Ան թրամփի ԱՄՆ-ի նախագահութիւնը ստանձնելէն ի վեր պաշտօնագուրկ դարձող 14-րդ բարձրաստիճան պատասխանատուն հանդիսացաւ: Այսպիսով, թրամփի հետ քաղաքական դաշտ մտնող քաղաքական գործիչներուն մեծամասնութիւնը դադրեցաւ իր պաշտօնէն:

Հանրապետական Մայք Պոմպիոյի մասին լայն տեղեկութիւններ չկան, սակայն ԱՄՆ-ի քաղաքականութեան մէջ նուրբ հարցերու առնչուող իր ծայրայեղ կեցուածքներուն շնորհիւ, ան Ուաշինկթընի «Բազէներ»-ու ցանկին առաջատարներէն հանդիսացաւ, ի հեճուկս թեւըրսընի, որուն աշխատանքի կարճատեւ շրջանը գնահատուեցաւ որպէս ամերիկեան դիվանագիտութեան մեկուսացման շրջան:

Պոմպիո չժամկէտ իր մերժումը իրանեան հիւլէական համաձայնութեան՝ յար եւ նման թրամփին, որ օրին էլոյթով մը այս համաձայնութիւնը իր իրկի պատմութեան ամենավատ դէպքը համարեց: Պոմպիո մեծ հաւատք չունի նաեւ կլիմայական ջերմութեան սահմանափակման հարցերուն, միւս կողմէն, Կուանդանամոյի բանտին մէջ ի գործ դրուող բարբարոսութիւններուն գլխաւոր ջատագովներէն մէկն է ան, որովհետեւ կը հաւատայ տանջելով տեղեկութիւններ ստանալու միջոցին: Ի հակադրութիւն թեւըրսընի, որ իր պաշտօնավարութեան 14 ամիսներուն ընթացքին հաւասարակշռեց իր դիրքագրիչ նախագահին ու անոր դաշնակիցներուն հակասական մօտեցումները: Թեւըրսըն միեւնոյն ատեն մեծ դեր ունեցաւ արաբական ծոցի պե-

տուութիւններուն եւ Զաթարի միջեւ հարցերու սրման մէջ:

Թեւըրսընին թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայիպ Երտողանի հետ ունեցած 3:30 ժամուան վերջին հանդիպումով, «գերծ պահեց» Ուաշինկթընի մնայուն դաշնակիցը Ռուսիոյ ամբողջական ենթական դառնալէ: Ու հակառակ անոր, որ այդ հանդիպումը խիստ գաղտնի պայմաններու մէջ գումարուեցաւ, ուր Երտողանի եւ Թեւըրսընի կողքին ներկայ գտնուեցաւ միայն Անգարայի արտաքին գործոց նախարար Մեւլուտ Չաոււշ Օղլուն, որպէս թարգմանիչ, նկատի ունենալով, որ Երտողան համաձայն չգտնուեցաւ նոյնիսկ թարգմանիչներ կամ գրագիրներ հրաւիրել այդ հանդիպումին:

Այսուհանդերձ, ամերիկեան մամուլը երկար խօսեցաւ այս հանդիպման նկատմամբ նախագահ թրամփի անտարբերութեան եւ գրուող գեկոյցով բաւարարուելուն մասին՝ առանց բերանացի գեկուցումի անհրաժեշտութիւնը զգալու:

Մինչդեռ այս հանդիպումին Երտողանի զլխաւոր մտահոգութիւնը 15 Յունիս 2016-ին իր վարչակարգին դէմ կատարուած յեղաշրջման յաջողողութիւնը իսկ Պոմպիոյի թուրքիոյ վրայ հրապարակած քննադատական խօսքն էր՝ ի պատասխան Իրանի արտաքին գործոց նախարար Ճաուատ Չարիֆի այն խօսքին, թէ յեղաշրջումը տապալող թուրքերը ժողովրդավարութեան արժեքներն ու իրենց ընտրած կառավարութիւնը պաշտպանող հերոսներ են: Պոմպիո իր գրառումին մէջ թուրքիան բռնակալական համակարգ ունեցող երկիր անուանած էր:

Պոմպիոյի ամերիկեան գաղտնի սպասարկութեան ղեկավարութիւնը ստանձնելէ ետք, Փետրուար 2017-ին Անգարա այցելութիւնը դրական չէր, այնպէս ինչպէս ներկայացուց թուրքիոյ կառավարութիւնը: Հակառակ այցելութեան նախօրէին թրքական լրատուամիջոցներուն վրայ երեւցող բարացուցական վերնագիրներուն, ըստ որոնց, սոյն այցելութիւնը նոր էջ պիտի բանար երկու երկիրներուն ռազմական եւ գիտութեան յարաբերութիւններուն եւ պիտի համակարգէր սուրիական տագնապին առնչուող եւ ՏԱՀԵՇ-ի դէմ պայքարելու անոնց ծրագիրները: Զուլիսներէն սպրդած տեղեկութիւնները, սակայն, յայտնեցին թուրք պատասխանատուներուն ուղղուած ամերիկացի հիւրին անախորժ արտայայտութիւններուն մասին, յատկապէս ԱՄՆ-ի նախկին քաղաքականութեան հետ հակասող իրենց քայլերուն եւ քիւրտերուն նկատմամբ ի գործ դրուած ճնշումներուն կապակցաբար:

Այսօր, թրքական դիվանագիտութեան կարեւորագոյն հարցադրումը այն է, թէ սուրիական տագնապին ուղղութեամբ անոնց աշխատանքներուն «համակարգու-

ԻՆՉ Է ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ

Սարգի Բ. Ե.

Ք.Ա. 4-րդէն 1-ին դարերուն ընթացքին արդէն սաղմնաւորուած է աշխարհիկ փիլիսոփայական միտքը: Մեծն Տիգրանի ու անոր որդի Արտաւազդ Բ. թագաւորի օրով Տիգրանակերտ եւ Արտաշատ մայրաքաղաքները դարձած են հոգեւոր մշակոյթի կեդրոններ: Ինչպէս կը վկայէ Փլութարքը, Արտաւազդ Բ-ի ողբերգութիւններուն եւ ճառերուն մէջ արտացոլուած են ստոյկութեան բարոյագիտական գաղափարները, իսկ արմաւիրեան արձանագրութիւններուն մէջ (յունարէն)՝ ստրկատիրական հասարակութեան բարոյագիտական տիպարները: Պահպանուած սակաւթիւ աղբիւրներէն յայտնի է, որ հելլենիստական Հայաստանի մէջ մեծ հետաքրքրութիւն կար փիլիսոփայութեան հանդէպ, հայոց թագաւորներու արքունիքներուն մէջ ապրած եւ ստեղծագործած են բազմաթիւ, այդ թուականին՝ օտարագրի (Մեթրոտրոս Սկեպսացի, Ամփիլրատես Աթենացի եւ ուրիշներ) գիտնականներ եւ փիլիսոփաներ: Հայագրի շատ մտածողներ փորձառութիւն եւ ճանաչում ձեռք բերած են ժամանակի նշանաւոր գիտակրթական կենդոններուն մէջ: Արեւմուտքին մէջ մեծ հռչակ վայելած է հռետոր, փիլիսոփայ, մանկավարժ հայագրի Տիրան Հայկազըն (Տիրանիոն)՝ նշանաւոր հռետոր ու փիլիսոփայ Սիսերոյի մտերիմը եւ օգնականը, աշխարհագետ Ստրապոնի ուսուցիչը:

ԻՆՉՈ՞Ւ ԿԸ ՓԻԼԻՍՈՓԱՅԵՆՔ

ՉԱԼՄԸՐՍ (CHALMERS)

-Կը կարծեմ, թէ ոեւէ մէկը եթէ ուզէ հասկնալ տիեզերքը, կամ ինքզինք ու իր տեղը ա՛յդ հսկայ համապատկերին մէջ՝ փիլիսոփայութեան պիտի դիմէ ճանչնալու եւ բացատրելու աշխարհը իր աղկազմային վիճակին մէջ:

Ոմանք այսպիսի հարցերով չեն հետաքրքրուիր. անոնք տարուած կ'ըլլան առաւելաբար տեղայնական կամ գործնական հարցերով: Ուրեմն, եթէ դուք հետաքրքրուած էք աշխարհին եւ մեր գոյութեան առնչուող էական հարցերով, այս պարագային փիլիսոփայութիւնը ձեզ պիտի հետաքրքրէ ու գոհացնէ:

ՄԱԿԻՆՏՈՇ (MAKINTOSH)

-Դժուար է ճշգրիտ պատասխան մը գտնել «ինչո՞ւ կը փիլիսոփայենք» հարցումին, որովհետեւ եթէ հետաքրքրուած ես, չես կրնար չդիմել փիլիսոփայութեան, իմաստասիրութեան: Բոլորս կը մտածենք, օրինակ, բարոյական ըմբռնումներու, ոճրագործները պատժելու, ճիշդի ու սխալի յարաբերութեան մասին:

Ամեն մարդ ալ երբեմն ինքնիրեն կը հարցնէ «Պէ՞տք է սուտ խօսիլ, ճի՞շդ բան է ստելը, թէ սխալ: Ո՞վ արդարացի է, ով՞ ոչ եւ այլն»:

ՉԱԼՄԸՐՍ (Chalmers)

-Փիլիսոփայութիւնը շատ հարուստ դաշտ է: Չեմ կարծեր որ փիլիսոփայութենէն վեր որեւէ բան գոյութիւն ունենայ: Փիլիսոփայութիւնը հիմնականին մէջ ուսումնասիրութիւն մըն է, որ ամեն բանի ծագումն ու անոր պատճառը կը փորձէ սահմանել: Մարդ արարածին մտքին մէջ հարցումներ կը յառաջանան որեւէ նիւթի հետ առնչուելու պարագային. «Ինչո՞ւ այս բանը այսպէս է», «Ինչո՞ւ կենսաբանութիւնը այսպէս կը թելադրէ, կամ քիմիագիտութիւնը, բնագիտութիւնը ինչպէ՞ս երեւան եկած են, որքանո՞վ իրականութեան կը համապատասխանեն... եւ այլն»:

ԻՆՉՈ՞Ւ ԱՄԵՆ ԻՆՉ ԱՅՍՊԵՍ Է

Կարծեմ եթէ իւրաքանչիւրիս մտքին մէջ նման հարցումներ կը ծագին ու մենք կը դիմենք փիլիսոփայութեան, «ինչո՞ւ»-ներու շարքը կ'երկարի եւ որքան խորանանք մեր մտածումներուն մէջ, այնքան կը մօտենանք փիլիսոփայութեան:

Ահա թէ ինչո՞ւ փիլիսոփայութիւնը շատ հետաքրքրական դաշտ մըն է, հակառակ անոր որ երբեմն ձեռ շարք մը հարցումները անպատասխան կը ձգէ: Այդուհանդերձ, որքան թափանցեց փիլիսոփայութեան խորքը, այնքան կը դժուարանանք պատասխան գտնել մեր հարցումներուն:

մը», որ սկսած էր Թեւըրսընի Անգարա այցելութեան օրով, շարունակութիւն պիտի ունենայ՝ թէ ոչ, յատկապէս ինչ կը վերաբերի Սուրիոյ Մուսայուն անախի քիւրտերուն:

Չաոււշ Օղլու իր ռուս պաշտօնակիցին այցելութեան ընթացքին Ուաշինկթընին յեռցուց, թէ «Թուրքիան չյարգելու պարագային» ԱՄՆ-ն փոխարինող ոյժ մը գոյութիւն ունի:

Քրտական գործօնը Երտողանի գլխաւոր խաղաքարտն է ԱՄՆ-ի

նոր դիվանագետին հետ իր կապերը պահելու:

Քաղաքական եւ Ռազմական դաշտերուն մէջ «Բազէներ»-ով շրջապատուած թրամփ, սակայն, կ'ենթադրուի որ լարուած յարաբերութիւններ ունենայ յառաջիկային իր բոլոր թշնամիներուն, նոյնիսկ երբեմնի պատմական դաշնակիցներուն հետ:

Արաբերէն թարգմանեց Մարէն Պապեան

## ԹՈՒՐՔԻԱՆ Ե ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ԵՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐԸ ԱՄԵՆԵՆ ՇԱՏ ԽԱՆՏՈՐԸ



Յարութ Սասունեան

Թուրք փորձառու լրագրող Աետաթ Երկին «Հուրրիեթ» թերթին մեջ գրած էր, որ «Մարդկային իրաւունքներու եւրոպական դատարանին մէջ (ՄԻԵԴ) Թուրքիան Ե Մարդկային իրաւունքներու խախտումներու առաջամարտիկը»:

Եւրոպական դատարանը դատական գործերու վերաբերեալ որոշումներ կը գոյացընէ այն առեւ, երբ Մարդկային իրաւունքներու եւրոպական համաձայնագիրը ստորագրած պետութիւնները կը խախտեն անոր դրոյթները: Թէեւ Թուրքիա միացած է Եւրոպական դատարանին՝ վերջինիս հիմնադրումէն 27 տարի անց՝ 1986 թուականին, սակայն փաստ է, որ Թուրքիոյ մէջ թիւով աւելի յաճախակի խախտումներ եղած են, քան միւս բոլոր անդամ երկիրներու մէջ՝ 1959-2016 ժամանակահատուածին: Եւրոպական դատարանը Թուրքիոյ մասին ընդհանուր առմամբ հրապարակած է 3270 դատավճիռ, որոնցմէ 2889-ին մէջ յայտնաբերուած են Մարդկային իրաւունքներու եւրոպական համաձայնագիրի խախտումներ: Դատարանը յայտնաբերած է, որ Թուրքիա միայն 73 պարագաներու մէջ չէ կատարած որեւէ խախտում: Մնացած բոլոր պարագաներուն հայցերը լուծուած են ուրիշ ձեւով: Զանի որ դատական գործերու մեծ մասին մէջ արձանագրուած է աւելի քան մէկ խախտում, ուստի Թուրքիոյ մէջ կատարուած խախտումներու ընդհանուր թիւը կազմած է 4514:

Մարդկային իրաւունքներու եւրոպական դատարանի 2016-ի տարեկան զեկոյցին մէջ յիշուած է՝

- Թրքական ամենէն մեծ խախտումները (832) եղած են «արդար դատավարութեան իրաւունքի» ոլորտէն ներս:

- Երկրորդ տեսակի մեծաքանակ խախտումները՝ 707 խախտում «ազատութեան եւ անվտանգութեան իրաւունքին կ'առնչուին»: Այս վերջին տեսակը կը նշանակէ, որ «Թուրքիոյ քաղաքացիները յաճախ կը ձերբակալուին ապօրինի ձեւերով, եւ այդ ձերբակալութիւնները դիւրութեամբ կրնան վերածուիլ դատավճիռներու», ըստ Երկինի:

- Խախտումներու մեծ թիւ կազմող 3-րդ տեսակը (653) «սեփականութեան պահպանութեան իրաւունք»ն է, ինչ որ կը նշանակէ, թէ մեծաթիւ թուրք քաղաքացիներ զրկուած են սեփականութեան իրաւունքէ:

- 4-րդ մեծ թուաքանակ ունեցող տեսակը (586) «վարոյթներու տեւողութեան» խախտումն է:

- «Արդիւնաւետ քննութեան բացակայութիւնը» 5-րդ դիրքի վրայ է՝ 412 խախտումներով:

- «Անմարդկային կամ արժանապատուութիւնը նուաստացնող վերաբերումը» 6-րդ տեղը կը գրաւէ՝ 314 խախտումներով:

- 7-րդ դիրքը կը գրաւէ՝ «արդիւնաւետ պաշտպանութեան իրաւունքը» (268 խախտում):

- «Արտայայտման ազատութիւնը» 8-րդն է (265 խախտում):

- 9-րդը՝ «կեանքի իրաւունքի՝ կեանքէն զրկելու» 133 խախտումներն են:

- 10-րդ դիրքի վրայ՝ «անձնական եւ ընտանեկան կեանքի նկատմամբ յարգանքի իրաւունքի» խախտումներն են (100 խախտում):

Ինչ կը վերաբերի Ատրպէյճանի, ապա վերջինիս գծով 2002-2016 թուականներուն Մարդկային իրաւունքներու եւրոպական դատարանին մէջ արձանագրուած է 122 դատական հայց, 118-ին մէջ յայտնաբերուած են Մարդկային իրաւունքներու եւրոպական համաձայնագիրի խախտումներ, որոնք շատ աւելի քիչ են, քան Թուրքիոյ խախտումները, քանի որ Ատրպէյճան ՄԻԵԴ-ին միացած է աւելի ուշ՝ 2002-ին: Մնացեալ չորս դէպքերը լուծուած են այլ ձեւով: Զանի որ որոշ պարագաներու եղած են մէկ աւելի խախտումներ: Ատրպէյճան ունեցած է ընդամենը 224 խախտում:



- Ամենամեծ խախտումները (44) եղած են «արդար դատավարութեան իրաւունքի» ոլորտէն ներս:

- Երկրորդ մեծաթիւ խախտումը (34)՝ «ազատութեան եւ անվտանգութեան իրաւունքի»:

- 3-րդ մեծաթիւ խախտումը (30)՝ «սեփականութեան պահպանութեան»:

- 4-րդ մեծաթիւ խախտումը (21)՝ «ազատ ընտրութիւններու իրաւունքի»:

- «Արդիւնաւետ քննութեան բացակայութիւնը»՝ 5-րդ մեծ թիւով խախտումն էր (17):

Միւս կողմէ՝ Հայաստան, որ Մարդկային իրաւունքներու եւրոպական համաձայնագիրին միացած է Ատրպէյճանի հետ միաժամանակ (2002), աւելի քիչ խախտումներ արձանագրած է: 2002-էն մինչեւ 2016 ՄԻԵԴ-ի կողմէ ընդդէմ Հայաստանի արձանագրուած է 75 դատավճիռ, 68-ի մէջ եղած են խախտումներ: Մնացած 7 դէպքերը լուծ-

## Աշակերտական Անկիւն

### ՓՎՓԱՔՍ



Ժենի Փիլանճեան

Հալէպ, 2011, ութերորդ ամիս: Ընտանեօք Հալէպէն Քեսապ մեկնեցանք՝ օղակոխութեան համար: Ամիս մը ետք ուզեցինք վերադառնալ, բայց քաղաքին վիճակը դժբախտաբար վատ էր: Որոշեցինք Քեսապ մնալ: Տարիներ անցան: 2014-ի, 21 Մարտին, քեսապցիներուն հետ տեղահանուեցանք: Երբեք չէինք պատկերացներ, որ Քեսապին նման բան կը պատահի, բայց ահաբեկիչները հո՛ն ալ մտան ու քանդեցին շատ բան: Լաթաքիա



էինք, ծնողքս քեսապցիներուն նման Քեսապ վերադառնալու եւ հոն հաստատուելու մասին կը մտածէր: Հալէպ չէինք կրնար երթալ, հոն վիճակը շատ գէշ էր:

Ինչ լաւ եղաւ, որ վերադարձանք մեր սիրելի Քեսապը: Հոն ուսումնառութեամբ կ'աշխատեցի Ազգ. Ուսումնասիրաց Ճեմարանէն ներս, եւ 9-րդ կարգի պետական քննութիւն դիմեցի ու յաջողեցայ:

Հիմա Ժ. Կարգի աշակերտուիի եմ, նոյն դպրոցին մէջ: Շատ կը սիրեմ Քեսապի վարժարանը: Ուրախ եմ, որ բախտը ունեցայ յաճախելու այսպիսի դպրոց՝ գեղեցիկ բնութեան գիրկին մէջ, հեռու քաղաքի աղմուկէն:

Փափաքս է, որ պաքալորիայի վկայականս ալ այս ճեմարանէն ստանամ:

Ժ. Կարգ  
Քեսապի Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ Ճեմարան

ուած են այլ ձեւերով: Նկատի առած որ որոշ պարագաներու եղած են մէկ աւելի խախտումներ, Հայաստան ունեցած է ընդամենը 119 խախտում:

- Ամենամեծ թիւով խախտումները (32) եղած են «արդար դատաքննութեան իրաւունքի» ոլորտէն ներս:

- Երկրորդ մեծաթիւ խախտումները (27)՝ «ազատութեան եւ անվտանգութեան իրաւունքի»:

- 3-րդ մեծաթիւ խախտումները (16)՝ «սեփականութեան պահպանման»:

Դրացի Վրաստան աւելի քիչ խախտումներ ունեցած է, քան Հայաստան: Վրաստան Մարդկային իրաւունքներու եւրոպական համաձայնագիրին միացած է 1999-ին: ՄԻԵԴ՝ 1999-2016՝ Վրաստանի դէմ ներկայացուցած է 68 դատական հայցեր, որոնցմէ 52-ը խախտումներ եղած են: Մնացած 16 դէպքերը կարգաւորուած են այլ ձեւերով: Զանի որ դէպքերէն քանի մը հատին մէջ արձանագրուած են մէկ աւելի խախտումներ, ապա Վրաստան ունեցած է ընդամենը 99 խախտում:

- Ամենէն մեծ թիւով խախտումները (20) եղած են «ազատութեան եւ անվտանգութեան իրաւունքի» համար:

- 2-րդ մեծաթիւ խախտումները (17)՝ «անմարդկային կամ արժանապատուութիւնը նուաստացնող վերաբերումի» համար:

- 3-րդ մեծաթիւ խախտումը (ուրաքանչիւրը 12 հատ) կապուած է «արդիւնաւետ քննութեան բացակայութիւն» եւ «արդար դատաքննութեան իրաւունքի» հետ:

Բացի վերոնշեալ խախտումներէն, Թուրքիա եւ Ատրպէյճան ՄԻԵԴ-ի հետ շատ աւելի լուրջ հարցեր ունին: 2016 Յուլիսին տեղի ունեցած յեղաշրջման փորձէն ետք, Թուրքիա որոշած է կասեցնել Մարդկային իրաւունքներու եւրոպական համաձայնագիրը: Սակայն Համաձայնագիրի որոշ հատուածներ չեն կրնար կասեցուիլ, ինչպէս՝ կեանքի իրաւունքը եւ խոշտանգումներու ու անմարդկային կամ արժանապատուութիւնը նուաստացնող վերաբերումի կամ պատիժի արգելքը:

Ատրպէյճան լուրջ հարց մը եւս ունի ՄԻԵԴ-ի հետ. վերջինս վճռած է, որ ատրպէյճանցի ընդդիմադիր քաղաքական նշանաւոր գործիչ Իլկար Մամետով պետք է ազատ արձակուի բանտէն: 2014-ին Ատրպէյճան մերժած է կատարել ՄԻԵԴ-ի որոշումը: Եւրոպական խորհուրդի Նախարարներու կոմիտէն եւ Խորհրդարանական վեհաժողովը շարք մը որոշումներ կայացուցած են՝ կոչ ուղղելով Ատրպէյճանի՝ ազատ արձակել Մամետովը: Եւրոպական Խորհուրդի Նախարարներու Կոմիտէն Նախաձեռնած է դատական գործի աննախադէպ վերանայման՝ ՄԻԵԴ-ի որոշումին դէմ Ատրպէյճանի ցուցաբերած անհամաձայնութեան պատճառով: Ատրպէյճանի կողմէ այս որոշման հետագայ մերժումը կրնայ եւ յանգեցնել Եւրոպական Խորհուրդէն Ատրպէյճանի վտարման...:

Արեւելահայերէնի թարգմանեց՝  
Ռուզաննա Աւագեան  
Արեւմտահայերէնի վերածեց՝  
Սեդա Գրիգորեան

## ՈՒՍՈՒՑԻՉԸ՝ ՊԱՐՈՆ ՓԻԼԻՊՈՍ ԴԵՐՁԱԿԵԱՆ



Գեորգ Պետիկեան

Գրադարանիս փոշիները ամեն- լով զբաղած էի: «Պարապ վախտի խաղալիք» պիտի ըսեր Իսահակեան, երբ դարակներէն մեկուն վրայ, Յալէայի Ազգ. Հայկազեան վարժարանի նախակրթարանի տարիներու հայերէնի «Շողական» Բ. տարուան դասագիրքս, յանկարծ աչքիս զարկաւ:

Ու ինչ զարմանք, արդէն կը զգամ, որ բազմազան անուններ ծնունդ կը սկսին ամեն ու կարգով կը փորձեն կրծել սիրտս եւ ուղեղս: Անուններ, որոնց անջնջելի յաճախ եւ ինքնաբերաբար կ'անցնին սրտի մորմոքով եւ յիշատակներու շարանով:

Եւ ի տես իրենց նման եւ արագ «ներկայութեան», այսպէս իրերայաջորդ կերպով կը ծնին դուրագներ, տեսարաններ, բառեր եւ երեւոյթներ, որոնք ոչ միայն կը ներկայացնեն, այլեւ կը պատկերեն ապրուած եւ անուշ անցեալի մը գոյնգոյն օղակներէն կախուած գեղեցիկ յուշեր, որոնք կարծես միաբերան քեզ կը կանչեն:

Անոր համար էր, որ այդ պահուն յիշողութեանս կ'ընկերանար նաեւ հինը վերապրելու հաճոյքն ալ: Հոգս չէր, եթէ այդ հինը նոյնիսկ որոշ դառնութիւն ունենար: Ինծի համար «հինը» միշտ սիրելի էր եւ այդպէս ալ կը մնար:

Իսկ հիմա արդէն կը զգամ, որ հաղորդուած եմ աշակերտական տարիներու տեսարաններով: Ճառագայթող տպաւորութիւն:

Թէեւ փոխուած եւ ժամանակները եւ փոխուած՝ նոյնպէս պայմանները, կ'ըսեմ եւ կը կրկնեմ, սակայն վարժուած ենք խօսիլ անցեալի եւ երբեմն՝ ներկայի մասին:

Բան մը արդարացնելու ճիգ մը չէ այս մէկը:

Ժամանակին հետ խօսիլ իր մասին եւ ան ալ արթնցող բաբախումներով: Ամէն զգայուն սիրտ պիտի ուզէր այս մէկը ապրիլ: Նորութիւն չէ:

Ինամքով կը վերցնեմ դասագիրքս: Կ'անջատեմ զայն պատող «միւսներէն» ու կը փորձեմ մատնետրովս ակնածանքով թղթատել:

Աստուած իմ, որքան հին է այս գիրքը: Ութսուն եւ անելի տարիներու կեանք: Կարծես վէպ մը ըլլար: Ու կը սկսիմ լռութեամբ կարդալ աչքիս հանդիպած էջերն ու անոնց տողերը, որոնք կամաց-կամաց յուշերս կը հասունցնեն:

Կը զգամ, որ մթնոլորտս լեցուն է նոր կեանքով: Կարծես երբեք չեմ մեկնած այդ դպրոցէն:

Եւ յանկարծ էջի մը ճակտին, բառ մը, նոթ մը կը ստիպէ, որ քիչ մը անելի կանգ առնեմ, քիչ մը անելի յամենամ:

«Ապրի՛ս»: Այսքան: Կոկիկ ձեռագիր:

Երկար կը մտածեմ: Կը փորձեմ յիշել այս բառին առիթն ու պահը:

Ու ինքնաբերաբար կրկնակի կ'իյնամ խոր մտմտուքի մէջ: Այդ պահուն, մէջս վերոյիշելու մեծ ցանկութիւն մը կը ծնի: Շուարած եմ եւ կը վախնամ, որովհետեւ յիշողութիւնս կրնայ ուշանալ: Կը վախնամ, որ նոյնիսկ կրնամ կորսուիլ:

Բայց... ո՛վ հրաշք... Թէեւ չեմ յիշեր առիթը, սակայն կը յիշեմ այդ բառին հեղինակը: Ուսուցիչս էր, այդ



օրերու հայերէն լեզուի դասատու՝ պարոն Փիլիպոս Դերձակեանը: Իր ձեռագիրն էր:

Պարոն Դերձակեան մեզի հայրենակից էր: Ծնողքիս շատ մօտիկ՝ յատկապէս ողորմած հօրս: Բայց, ոչ մէկ արդարացում: Ինք «խիստ» եւ բժախնդիր ուսուցիչ էր: Իր մօտ բացառութիւն չկար: Միշտ ակնածանքով իրեն կը մօտենայինք: Հարուստ անհատականութիւն:

Միջահասակ, կոկիկ ու սանտրուած մազերով, միշտ մաքուր եւ կոկիկ հագուած, միշտ փայլուն ու ներկուած կօշիկներով եւ աչքերուն մթազոյն ակնոցով: Ակնոց, որուն երկու ապակիներու ետին աչքերու գունդերու խաղերը կարելի չէր տեսնել կամ նշմարել:

Միշտ իր դէմքին վրայ արձանացած եւ ծանր շուքով կիսատ ժպիտ մը կար: Յաճախ ալ անժըպիտ: Լայն ճակատով դէմք մը, յօնքերու անհանդարտ շարժումներով միասին: «Երկաթ մարդ»: Դպրոցի բարձր կարգի աշակերտները, իր անուան այս անուն-մակդիրը «կապած էին»: Իսկապէս, որ դուրսէն տեսնողի կամ դիտողին համար, կարծես ինք ուրիշ աշխարհէ եկած էր: Դանդաղ եւ հաստատ քայլերով:

Դպրոց կամ ակումբ, նոյնն էր: Ինք շատ լաւ դիտող մըն էր: Ունէր իր անձնական տեսակետը: Եթէ կ'ուզէր, իր հաստատ համոզումը, գոր կ'արտայայտէր իւրայատուկ ձեւով եւ ճշգրիտ առաքելութեամբ, սովորականէն վեր համարձակ ու անշահախնդիր: Արեւմտահայերէնի վրայ իր կեանքէն անելի գուրգուրացող հայ մը: Հարագատ խարբերոցի մը: Մէկ խօսքով, առանց սակարկութեան՝ նուիրում:

Ինք, հաւանաբար իր ասպարէ-

զը աղօթքի նման ինքնաբերաբար նուիրումի վերածած էր: Իրեն համար միայն հայ աշակերտով կարելի պիտի ըլլար ասպարէսել Մեսրոպ Մաշտոցը:

Ու չեմ գիտեր այսպէս որքա՞ն ատեն գրադարանիս բաց երկու փեղկերուն դիմաց կանգնած էի: Անմիջապէս կը զգամ, որ տարիները չեն պոտորած, ոչ ալ մաշած կամ մոռացութեան մատնած՝ պարոն Դերձակեանի ներկայութեան պահերը եւ պատգամի ուժ ունեցող իր խօսքերուն թարմութիւնը:

Իրապէս, որ ինք ալ հիմա գրադարանիս դիմաց, կեցած «կ'ապրէր»:

Եւ եթէ այդ վայրկեանին բան մը կար, որ գիտ այսպէս անտրտունջ եւ կանգուն կը պահէր, ան ալ իր յուշերն էին: Մեր այդ փոքր տարիքին, հայ ուսուցիչի իր կերպարով, ինք ոչ միայն մեզի կը ծանօթացներ մեր մայրենին, այլեւ հայ գիրքին կը մօտեցներ եւ մեր աչքերը կը կապէր հայ աշխարհին, հայ կեանքին ու հայ մարդոց՝ անկեղծ դրոշմով:

Անձնական փորձառութենէս մեկնած՝ կ'ուզեմ կրկին անգամ բացայայտել, որ ուսուցչութիւնը ինքնին պահանջկոտ ու դժուար առաքելութիւն մըն է: Հայ ուսուցիչն է մեր ազգային պայքարի յառաջապահը, մեր օրերու ֆետային եւ հայ ստեղծագործ միտքը, որ նկարագիր կը կերտէ մեր մատուղած սերունդի ուղեղներուն մէջ:

Նաեւ կը հաւատամ, որ ուսուցիչներու ուսերուն ծանր եւ միեւնոյն ժամանակ պատասխանատու աշխատանք է դրուած: Որովհետեւ ինծի համար հայ ուսուցիչը այն հիմքն է, այն կենսատու աղբիւրը, որուն շնորհիւ կը ձեւաւորուի, կը լիցքաւորուի հայ աշակերտին մտածելակերպն ու աշխարհայեացքը:

Նաեւ որովհետեւ հայ ուսուցիչին համար կարեւորը տալն է, ոչ միայն ըլլալը: Այլ խօսքով, ճառագայթելն է. ուսուցիչ անունը կրելէն անելի: Ա՛յս է իսկական ուսուցիչին առաքելութիւնը:

### ՄԱՅԻՍԵԱՆ... Սկիզբ՝ էջ 1

«Գ. Եսայեան» սրահը կը թնդար հայկական եռագոյնն ու ՀՅԴ դրօշը բարձրացուցած երիտասարդութեան երգերով ու կանչերով:

Ձեռնարկին բեմավարութիւնն ու բացման խօսքերը եւս վստահուած էին երիտասարդներու:

Հայերէն բացման խօսք արտասանեց Սարո Դազարեան, իսկ արաբերէն՝ Սարին Թաթոյեան:

Օրուան բեմավարն էր Ժագի Մահսերեճեան: Ընդմիջումով մը առիթ ընծայուեցաւ նաեւ ՍԵՄ-ի անդամներուն՝ Կասիա Պաղտիկեանի եւ Մարիա Զիչեանի, որպէսզի յաջորդաբար մեկնաբանեն «Չի-նուորի մօր երգը» եւ «Չոհուածներին» երգերը: Աւարտին, բեմ իրաւորուեցաւ վերապատուելի Յարութիւն Սելիմեան՝ իր սրտի խօսքը յայտնելու:

Կը մտածեմ ու կը կրկնեմ: Չոհուածներն եւ նուիրումն եւ այդ նուիրումի արարքին մէջ իսկ գտնել գոհունակութիւն: Վերջի վերջոյ հայ ուսուցիչը ե՛ւ դասատու է, ե՛ւ դաստիարակ:

Մեր մեծերը միշտ ըսած են, «մարդուն բնութագիրը իր ամբողջ կեանքի ընթացքին իր ստեղծածն ու ձեռք բերածն է»: Եւ ահա յստակ օրինակը:

Ուստի կ'ուզեմ այս պահուն բռնել մտքիս թելը, ընթանալու համար անշեղ: Կը վախնամ, որ յանկարծ այդ թելը կտրուի վայրկեաններուս մէջ եւ մոլորուի ներկայէն, ու անցնի անցեալ:

Անոր համար կ'ուզեմ ազատ պահել գրիչիս բերանը:

Պարոն Դերձակեան, իբրեւ իսկական մտահոգ եւ մտածող, երագը կեանքի վերածող լոյսի ճամբուն առաջնորդող հայն էր: Ամէն դասի պահուն կը խօսէր, կը յորդորէր, որ մենք աշխատինք բարձր բռնել հայ մտքի «ջահը»:

Ու հարագատօրէն եւ անկեղծ կրնամ ըսել, որ ինքն էր մէջս հայերէն գիրք կարդալու սերն ու լոյսը ամբարեց: Ու ամէն օր ինք կ'ապրէր այդ լոյսին համար, ուրախութեամբ եւ ֆիզիքապէս, որպէսզի շուտով բոլորս ալ վերակազմուէինք եւ ճակատաբաց մուտք գործէինք «հայութեան» շէնքէն ներս:

Ահա թէ ինչպէ՞ս եւ ինչո՞ւ հայերէն գիրքը ինծի համար դարձած է եւ կամ դարձաւ մեծ ցանկութիւն, կողմնացոյց, ուղեկից եւ հաւատարիմ բարեկամ: Նաեւ եղաւ մտքիս նոր ճանապարհ բացող, դէպի գեղեցիկը ե՛ւ բարին ե՛ւ ճշմարիտը բացայայտող տեսակ մը ազգային գիտակցութեան, հայութեան գոյատեւման հիմնաքար եւ մայրենի լեզուի պաշտամունք:

\*\*\*

Վերջապէս փակեցի գրադարանիս փեղկերը: Անցեալս, իր շնորհապարտ եւ երախտապարտ զգացումներու փունջերով, կրկին խնամքով պահեցի գրադարանիս մէջ:

www.kantsasar.com  
www.kantsasar.com  
www.kantsasar.com

## ՄՏԱՄԱՐԶԱՆՔ



### ԽԱԶԲԱՌ (ՄՆ 243)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

#### Հորիզոնական

- 1-2ապել Եսայեանի երկերէն:
- 2-Արական անուն: 5400:
- 3-Հակառակ՝ հանքային համեմ: Վարդան Ստեփանեանի ծածկանու-  
նը:
- 4-Ցաւի ճիշ: Խորտակել, քայքայել: Ձայնանիշ մը:
- 5-Հակառակ՝ իրերայաջորդ տառեր: Հակառակ՝ տառի մը հարեանները:
- 6-Տարածքի միաւոր:
- 6-520: 7001: Ամենէն առաջ: Հակառակ՝ ժխտական նախածանց:
- 7-Տարագրութիւն: Անծանօթ:
- 8-Ոստայն: Հակառակ՝ հայ երգիչ:
- 9-Վերջածանց: Տառի մը հարեանները: Լարաւոր նուագարան մը:
- 10-Ժամանակագրութիւն: Տարածքի միաւոր:
- 11-Հակառակ՝ տարածքի միաւոր: Տարի:
- 12-Տիգրան Մանսուրեանի ստեղծագործութիւններէն:

#### Ուղղահայեաց

- 1-Քաղաք Հայաստանի Արմաւիր Մարզին մէջ:
- 2-Բարիք: Լաւ, պարկեշտ:
- 3-Հակառակ՝ իրերայաջորդ տառեր: Վերջածանց:
- 4-Հակառակ՝ կողմ մը: Հակառակ՝ ցաւ:
- 5-Փոքրացնող մասնիկ: Հակառակ՝ թատերգութեան տեսակ: Պարարտ:
- 6-Հակառակ՝ 64: Իգական անուն:
- 7-Տաղաչափուած գրութիւն:
- 8-Հակառակ՝ արեգակ:
- 9-530: Ասացուածք: Հակառակ՝ յոգնակերտ մասնիկ:
- 10-Բուն: Անվերջնատառ՝ դրամանիշ մը:
- 11-Թոյլ: Ընծայ:
- 12-Ճափոնական թատրոն: Թատերական ներկայացումի դադար: Անորոշ մասնիկ:



### Պատրաստեց Մարինա Զիւլբոշեան-Պողիկեան

### ՍՈՒՏՈՔՈՒ (ՄՍ 243)

Տեղաւորէ՛ (1-9) թուանշանները (9x9) քառակուսիներուն մէջ այնպէս, որ իւրաքանչիւր հորիզոնական եւ ուղղահայեաց տողի մէջ, ինչպէս նաեւ (3x3) տուփիկի մէջ մէկ անգամ արձանագրուին:

	4							6
9		5		2	1	7		
					6		9	3
	5	7						9
	1	2				5	3	
						8	1	
	3	4	6					
			1	7		3		2
6		1	8				7	5

### ՊԱՅՈՒԱԾ ԲԱՌ (ՄՊ 14)

Վահան Թեքեանի բանաստեղծութիւններուն վերնագիրները ջնջելով գտէ՛ք պահուած բառը:

Պահուած բառը 10 տառերէ բաղկացած Վահան Թեքեանի բանաստեղծութիւններէն մէկը կը ներկայացնէ:

ի	մ	ա	ն	ո	ւ	ն	դ
ե	ս	ս	ի	ր	ե	ց	ի
կ	ա	զ	ա	ղ	ա	չ	ո
ա	ն	ա	ւ	ն	ք	ն	ը
ն	ց	ր	զ	ա	ո	ի	ղ
թ	ա	ե	փ	ր	ն	չ	ւ
ե	ւ	ա	ե	ր	ը	ո	ի
ղ	փ	ք	ե	զ	մ	է	զ

«Կանթեղ», «Ես Սիրեցի», «Փափաք», «Անցաւ Գնաց», «Իմ Գիւղը», «Երագ», «Զեզմէ Ոչինչ», «Անունդ»

## ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

### ԽԱԶԲԱՌ (ՄՆ 242)

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	ա	յ	օ	ր	յ	ա	ր	ե	ա	ւ	
2	ր	ա		ր	ե	ն		ա	կ	ն	
3	մ	ր		կ				մ	կ	ա	ն
4	տ		ե	կ		ի	յ		ք	ա	ա
5	ա	մ		ա	ն	ն	ա		ա	յ	ո
6	ն	ա	մ	ն		ա	ր	ա	ր		ւ
7	ն	կ					ո	ր	ի	զ	կ
8	ե	ր	ա	ս	յ	ա	ւ	ա	ն	ա	ա
9	ս	ա	ն		ե	ր	թ		տ	ա	ր
10	ա	ղ		մ		2	ի	ր	ա	կ	ա
11	յ	է		ի	ր	ա	ւ		կ	ա	ր
12	ի	պ	ս		ո	ւ	ն	կ	ն	ի	ս

### ՍՈՒՏՈՔՈՒ (ՄՍ 242)

7	9	8	4	2	5	1	3	6
2	6	1	7	9	3	4	8	5
3	4	5	6	8	1	2	9	7
9	1	4	3	6	8	5	7	2
6	8	2	5	4	7	3	1	9
5	7	3	2	1	9	8	6	4
1	2	6	8	7	4	9	5	3
4	5	9	1	3	6	7	2	8
8	3	7	9	5	2	6	4	1

### ՊԱՅՈՒԱԾ ԲԱՌ (ՄՊ 13)

Պահուած բառը՝ «Իդէք Առ Հայաստան»

ԻՆՉ ԿՐՄԵՆ ԱՍՏՂԵՐԸ

ԽՈՅ



Չգոյշ եղէք բարձր ձայներէն: Անակնկալ ճնշումներ թող չազդեն ձեր վրայ: Չկարենալ յստակ արտայայտուելու պատճառով պիտի նեղանաք եւ թշնամական դիրք որդեգրէք:

ՅՈՒԼ



Կարելի է մթնոլորտը դրականացնել: Ձեր փաստաթուղթերուն մէջ մի՛ թերանաք: Ձեր միտքը պիտի հանգստանայ: Ընկերներու եւ բարեկամներու հետ եղէք:

ԵՐԿՈՒՐԵԱԿ



Ուրախ շրջան մը պիտի ապրիք. հետաքրքրական փորձառութիւններ պիտի ունենաք: Ձեր գործերը պիտի բարգաւաճին, ձեր տրամադրութիւնը պիտի բարձրանայ:

ԽԵՑՊԵՏԻՆ



Ուրիշներու հարցերուն մէջ մի՛ մտնէք, որպէսզի չազդուիք: Սակարկելու եւ բանակցելու կողմնակից էք: Ձեր յարաբերութիւնները եւ ճամբորդութիւնները պիտի աշխուժանան:

ԱՌԻՒԾ



Պրկուած ու լարուած մթնոլորտը հանդարտեցուցէք եւ վերատիրացէք ձեր դիրքին: Նոր շրջան մըն է ձեզի համար. ծանօթացման նոր դուռեր պիտի բացուին ձեր դիմաց:

ԿՈՅՍ



Մի՛ ստորագրէք պայմանագիր: Բացասական շրջան մըն է առանց բախտի եւ զօրութեան: Ձանձրոյթ, ցաւ ու նեղութիւն պիտի գգաք: Ձեր աշխատանքը պիտի դանդաղի:

ԿՇԻՈՔ



Աջքառու յաջողութիւն եւ ձեռքբերում մը պիտի ունենաք: Բախտը ձեզի պիտի ժպտի, եւ մեծ պիտի ըլլայ ձեր ուրախութիւնը:

ԿԱՐԻՃ



Ձեր հաշիւները կրկին պիտի սերտէք: Վիճաբանութեն եւ արագ որոշումներէ հեռու մնացէք: Չենեցէ պայմանագիրներու մանրամասնութիւնները:

ԱՐԵՂՆԱՌՐ



Յարմար եւ դրական ժամանակ է առեւտրական գործերու եւ քննութիւններու: Մի՛ յետաձգէք ձեր գործերը, այլ կրկնապատկեցէք ձեր ճիգերը:

ԱՅԾԵՂՋԻՐ



Ձեր ժամանակը լաւ կարգաւորեցէք չթերանալու համար գործին մէջ: Ժամանակ մի՛ կորսնցնէք եւ մի՛ յետաձգէք ձեր գործը: Ձեր ամողջական վիճակին հոգ տարէք:

ՋՐԴՍ



Ձեր զօրաւոր հակառակորդներէն զգոյշ եղէք: Անարդարութեան պիտի ենթարկուիք: Արկածախնդրութեան մի՛ դիմէք:

ՁՈՒԿ



Կարողութիւն ցուցաբերեցէք օգնելու ուրիշներուն: Ձեր կեցուածքներուն պիտի գօրակցին ուրիշներ: Ժըխտական մի՛ ըլլաք:



ՈՒՂԵՂԸ ՄԱՐԶԵԼՈՒ ՊԱՐԶ ԵՒ ԱՐԴԻՆԱԿԷՏ ՄԻՋՈՑՆԵՐ

Ձեր ուղեղը լաւ վիճակի մէջ պահելը ամենալաւ միջոցներէն մէկն է վատահ ըլլալու համար, որ ան ոչ միայն պիտի ծառայէ ձեզի, ձեր ամբողջ կեանքին ընթացքին, այլեւ աստիճանաբար պիտի կատարելագործուի: Եթէ կ'ուզէք մարզել ձեր ուղեղը, կրնաք հետեւեալ միջոցները օգտագործել:

1-ԽԱՉԲԱՍ ԼՈՒԾԵՑԷ

Խաչբառ կամ թուաբանական այլ խաղեր լուծելով, դուք կը դրդէք ձեր ուղեղը տրամաբանութեամբ մտածելու: Այս սովորութիւնը զարգացնելով դուք ոչ միայն հաճելի վարժութիւն կը կատարէք ձեր ուղեղին համար, այլեւ ձեր կեդրոնացումի յատկութիւնը կը զարգացնէք:

2-ՅԱՃԱՆԱԿԻՕՐԵՆ ԳՐԵՑԷ

Անժխտելի փաստ է, որ մենք կ'ապրինք այնպիսի աշխարհի մը մէջ, ուր կ'իշխեն ստեղծաշարերն ու պատահները, եւ թուրջ աստիճանաբար անցեալի վկան դառնալու կը դատապարտուի: Ձեր մտքերը գրի առնելը կը զարգացնէ ձեր կեդրոնացման կարողութիւնը, կը բարելաւէ յիշողութիւնը եւ ուղեղին աշխատանքը:

3-ԳՐԵՑԷ ԶԵՐ ՄԻՍ ԶԵՆՔՈՎ

Ձախ ձեռքով (եթէ, անշուշտ, աջիկ էք) նշումներ կատարելը կամ նամակներ գրելը հաւանաբար այնքան ալ լաւ գաղափար մը չէ: Միջոցն սովորական խճճանքը, զձեզ կամ պարզապէս քանի մը նախադասութիւն գրելը ձեր միւս ձեռքով կը խթանէ ուղեղին աշխատանքը: Քանի որ

ոչ-սովորական ձեռքին օգտագործումը կ'աշխուժացնէ ուղեղին ոչ այնքան գործածուող մասը՝ հանգեցնելով նորարական մտածողութեան:

4-ԱՄԵՆ ՕՐ ՆՈՐ ԲԱՌ ՍՈՐՎԵՑԷ

Ամէն օր նոր բառ սորվիլը հիանալի միջոց է բարելաւելու համար թէ՛ ձեր յիշողութիւնը, թէ՛ ձեր բառապաշարը: Սորվելով ու յիշելով նոր բառեր եւ օգտագործելով զանոնք՝ դուք կը ստիպէք ձեր ուղեղի երկու կիսագունդերը համատեղ աշխատելու: Չկայ ուղեղին համար անելի մեծ մտային աշխատանք, քան նոր լեզու սորվիլը:

5-ՇԱՏ ԿԱՐԴՍԷ

Եթէ կ'ուզէք, որ ձեր ուղեղը մնայ սուր եւ առողջ, պէտք է ան տեսաբար աշխոյժ վիճակի մէջ ըլլաք: Սա իրականացնելու համար անհրաժեշտ է ընթերցանութիւնը անընդհատ մասը դարձնել ձեր ամօրեային:



Պէտք է ընթերցել զանազան նիւթեր, քանի որ որքան տարբեր ըլլան ընթերցանութեան նիւթերը, այնքան կը բարձրանայ ձեր ուղեղը: Վեպ կարդալը կը զարգացնէ ստեղծագործական միտքը, միջոցն թերթ կամ

ԸՆԹԵՐՑԱՄԵՐ ՄԱՐԴԻԿ ԼԱՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ ԵՆ

Շատ դժուար է գտնել մարդիկ, որոնք կ'ընթերցեն հաճոյքի համար, ոչ թէ ստիպողաբար: Շատ հաճելի եւ օգտակար է բարեկամանալ ընթերցասէր մարդոց հետ, որովհետեւ:

-Անոնք ընթերցելով կը զարգացնեն իրենց մտահորիզոնը: Ընթերցանութիւնը կը նպաստէ



գիտելիքներու ձեռքբերման եւ անելի համբերատար ու հանդուրժող կը դարձնէ մարդը: Անիկ կը սորվեցնէ անոնց գնահատել իւրաքանչիւր մանրուք:

-Անոնք անելի իմաստուն եւ զարգացած են: Որքան շատ կ'ընթերցէք, այնքան անելի խելացի եւ բազմակողմանի զարգացած կը դառնաք: Ընթերցասէր մարդիկ անելի դիւրութեամբ կ'ընկալեն տեղեկութիւնը եւ անոնց հետ հաճելի է բարեկամանալ, քանի որ գրուցելու ընթացքին շատ հազուադէպ կը լսեք «չեմ գիտեր» բառը:

-Անոնք ունին ստեղծագործ միտք: Ստեղծագործ միտքը շատ կարելոր է յարաբերութիւններու մէջ, քանի որ մէկ տարի շփուելէ յետոյ ար-

դէն շատ դժուար է դիմացիլը հետաքրքրել կամ զարմացնել: Սակայն այն մարդը, որ շատ կ'ընթերցէ, սպունգի նման կ'իւրացնէ հեղինակներու մտքերը, որոնց մասին ան մինչ այդ չէր գիտեր: Եւ եթէ կ'ուզէք երկարատեւ յարաբերութիւններ սկսիլ, ընտրեցէք ընթերցասէր բարեկամ մը:

-Անոնք հոգիով դեռ մանուկ են: Նման մարդիկ կարծես մանուկ ըլլան, անոնք հիանալի կերպով կը դաստիարակեն իրենց զաւակները: Միայն ընթերցասէր մարդը կրնայ իր փոքրիկին պատմել բազմաթիւ հեքիաթներ՝ Նոյնիսկ յօրինել:

-Անոնք անելի կրթոտ սիրեկաններ են: Այս տեսակ մարդիկ յաճախ կը կարդան սիրային վեպեր եւ բնականաբար ընթերցասէր մարդիկ անելի մեծ երեւակայութիւն կ'ունենան:

-Անոնք անելի համբերատար են: Քանի որ գիրքը կարդալու եւ անարտելու համար կը պահանջուի երկար ժամանակ (օրեր, եթէ ոչ՝ շաբաթներ), հետեւաբար, անհրաժեշտ է համբերատար ըլլալ:

-Ընթերցասէր մարդիկ շատ բան կրնան սորվեցնել դիմացիին: Արդէն յայտնեցինք, որ ընթերցասէր մարդիկ շատ բանիմաց են, քանի որ անոնք կը սիրեն նոր գիտելիքներ ձեռք բերել: Յետեւաբար, անոնց հետ ծանօթանալով, դուք միշտ նոր տեղեկատուութիւն կը ստանաք տարբեր ոլորտներու մասին:

-Անոնք գիտեն, թէ ինչ կը նշանակէ հոգատարութիւն: Գիրքը պատրաստուած է թուրջ, որ փխրուն եւ դիւրաբեկ է: Իսկ ընթերցասէր մարդը մեծ հոգատարութեամբ կը վերաբերի իր սիրելի գիրքին, քանի որ օր մը ան անպայման գիրքը վերընթերցելու ցանկութիւն պիտի ունենայ: Սակայն ընթերցասէր մարդիկ շատ ուշադիր են ոչ միայն իրենց, այլեւ ուրիշի իրերուն նկատմամբ:

## ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

### ՄԱԲԽԸ...

Սկիզբ՝ էջ 8

*ունենայ, եթե հասկցար միտքս՝ գևա՛գործիդ:»*

Վերջին պատուերը ծանր եր. Սահակեան վարժարանի երկրորդ թե երրորդ դասարանեն ելած տղան թեև լաւ չէր հասկնար եղբայր Լուստերին բառերուն նշանակութիւնը, բայց ան մտածումներու մէջ ինկած՝ գլուխը վեր կ'առնէ ու ինքնավար տահ, վճռական շեշտով մը կը պատասխանէ.

-Այո՛ եղբայր Լուստեր, այսօր ես Արտաւազդին մո՛ւխը պիտի մարեմ եւ կօշիկներն ալ ձեռքը պիտի տամ...

Խաղին առաջին վայրկեաններուն իսկ Մանուկ ուժգին հարուած մը կ'իջեցնէ Արտաւազդի ոտքին, որ գնդակը ամած կը փորձէր ճեղքել ՅԱԼԱ-ի յետսապահ գիծը: Երկուքը իրարու ծուռ-ծուռ կը նային: Քանի մը վայրկեան անց, այս անգամ օղէն եկած գնդակի մը առիթով Մանուկին եւ Արտաւազդին միջեւ տեղի կ'ունենայ զօրաւոր բախում մը, Արտաւազդ կ'իյնայ գետին, ան չի բաւարարուիր իրաւարարին ի նպաստ իրեն տուած ազատ հարուածով, այլ կ'ազդարարէ: -

-Մանուկ, մաքուր խաղցի՛ր, այլապէս...

Մանուկ պատասխան չի տար քթին տակէն կը խնդայ, բայց անոր պոչը չի ձգեր: Մանուկին սրունքները երկար են ու յաճախ աքցանի դեր կը խաղան արգելք կ'ըլլան Արտաւազդին խաղին: Արտաւազդ պահ մը կը մտածէ, քիչ մը չոր քիչ մըն ալ ջղային ձայնով կը յարէ.

-Լակոտ, ի՞նչ կը դառնաս շուրջս, ի՞նչ կ'ուզես ինձմէ... Ծառ եղաւ ըրածդ:

Լակոտ բառը կը բզզայ Լոր Գիւղի հոգիով մեծցած այդ տղուն ականջին մէջ: Ծուռ-ծուռ կը նայի ու հեգնական ձայնով կ'ըսէ: -

Խաւածա Արտո, Ինձի իրաւանգուած է, որ այսօր քու մուխդ պիտի մարեմ, այն ատեն կը հասկընաս ի՞նչ կ'ուզեմ քեզ մէ եւ ո՞վ է լակոտը:

Այդ օր ՅԱԼԱ-ը յաղթեց Ինձին Սփորթփիլին ու բաժակը առաւ Սուրիոյ հերոս գակիկ Իպրահիմ Յանաւոյի ձեռքէն, իսկ այդ օրուընէ սկսեալ Մանուկին անունին քով «Մուխը մարեմ Մանուկ» ածականը աւելցաւ ու անով դարձաւ հանրածանօթ:

### ՈՒՒՄԵՐՈՒ...

Սկիզբ՝ էջ 16

անգլերէն բաժինի խօսք՝ Մարգրիտ Ծամկեանի, արաբերէն բաժինի խօսք եւ երգի երաժշտական մշակում՝ Յամբիկ Յեքիմեանի:

Ապա ան մեներգեց «Յաղթանակի Որոշումը» արաբերէն երգը, արաբերէն բաժինի խօսքը բանաստեղծ Ապտուլ Մունեմ Լահիամի, ռուսերէն բաժինի խօսքը՝ Նունէ Երանոսեանի, երաժշտութիւն՝ Յամբիկ Յեքիմեանի:

Երգեցողութենէն ետք, բեմ իրաւորութեամբ հալեպահայ հայրենաւանդ վաստակաւոր ուսուցչուհի, գրող Լալա Միսկարեան-Միսասեան, որ ընթերցեց «Ծիրանի Ոգիներ» իր գիրքէն բաժին մը:

Անոր գագացական եւ տպաւորիչ ընթերցանութենէն ետք, Խաչիկ Աշճեան խոր պարունով եւ յոյզով մեներգեց «Լոր Գիւղ» երգը, խօսք՝ բժշկ. Ղազար Պօղոսի, երաժշտութիւն՝ Տիգրան Մուարտեանի: Երգին դաշնամուրով ընկերակցեցաւ Յովհաննէս Օհանեան:

Այնուհետեւ Յամագայիկի Յայագիտական Յիմնարկի շրջանաւարտ, կրթական մշակ Յուշիկ Ղազարեան ընթերցեց իր «Ոգեկոչում» եւ «Տեր Չօր» ստեղծագործութիւնները:

Աշոտ Թեմիրեանը ոգեւորութեամբ մեներգեց «Ամեղ գոհեր» երգը, խօսք Ռաֆֆի Սիւլահեանի, երաժշտութիւն՝ Սիւր Միսասեանի:

Ապա հալեպահայ գրող Մարիանա Պերթիկեան-Ղազարեան ընթերցեց իր «Բողբոջող Ամմոռուկներ» եւ «Ձայն Տո՛ւր, Ծառ» գիրքէն հատուածներ:

Ընթերցումին յաջորդեց արուեստագետ Կարօ Սահակեանի պատրաստած հայկական եկեղեցիներու մանրակերտներուն ցուցադրութիւնը, եւ Յ1 ալիքէն սփռուած յատուկ տեսանիւթը: Ցուցադրուեցաւ նաեւ քանդակագործ Վարդգէս Պարսումեանի քանդակները եւ պատերազմի օրերը խորհրդանշող ծաղրանկարները: Հետաքրքրական այս ցուցադրութենէն ետք, բեմ իրաւորութեամբ Յամագայիկի «Ն. Աղբալեան» Մասնաճիւղի Գրական Յանձնախումբի ատենապետ, դեղագործ Յակոբ Տլուեան, որ Շոփէնի երաժշտութեան գուզընթաց ընթերցեց իր անտիպ գործերէն բաժիններ:

Ճորճ Գալայճեան մեներգեց «Սուրիահայ Քաջեր» երգը, խօսք՝ Աւօ Գաթրճեանի, երաժշտութիւն՝ Յովհաննէս Ատուրեանի:

Յայտագիրի աւարտին բեմավարները իրենց ջերմ շնորհակալութիւնը յայտնեցին աւելի քան քսան հինգ մասնակից արուեստագետներուն, որոնք ընդառաջեցին Յամագայիկի «Ն. Աղբալեան» Մասնաճիւղի «Մուշեղ Իշխան» Գրական Յանձնախումբի «Ռումբերու Տակ Ստեղծուած Արուեստը» ձեռնարկին եւ բուն ծափողոյններով պարգեւատրեցին գիրքը: Յիշենք, որ սոյն ձեռնարկի պատրաստութեան վերոյիշեալ մասնակիցներուն կողքին նպաստեցին արուեստագետներ. - Զոհրապ Զեօշկերեան, Կարօ Սահակեան, Վարդգէս Պարսումեան, Արմէն Յովսէփեան, Յակոբ Ժամկոչեան, Աշոտ Պապօղլեան, Ժինա Միսասեան, Մանիա Մենեշեան եւ Սթեֆանի Սահակեան:

### ՍՕՒ-Ի ՄԱՅՐԵՐՈՒ...

Սկիզբ՝ էջ 16

ցախի, Ջաւախքի նաեւ տազնապահար սուրիահայոց համար ՅՕՒ-ի

նիւթաբարոյական մեծ ներդրումին, որ իրականացաւ աշխարհացրիւ իր անդամուհիներու ժրաջան մասնակցութեամբ: Ան դրուատեց Յայ Կնոջ դերը որպէս մայր, բուժքոյր, գինեալ մարտիկ, խորհրդարանի անդամ, նախարար մինչեւ իսկ դեսպան, որ ընդմիջտ մնալով պատնէշի վրայ անքիծ պահեց Անկախութեան Դրօշն ու Չինանշանը: Տ. Յակոբեան դիտել տուաւ, որ ՅՕՒ-ը հայրենիքի մէջ խորհրդածողովով մը պատշաճօրէն պիտի յիշատակէ Յայաստանի Յանրապետութեան 100-ամեակը՝ 2018-ի Մայիս ամսուն Երեւանի Յամալարանէն ներս: Իր խօսքի աւարտին ան փոխանցեց ՅՕՒ-ի Կերը. Վարչութեան ու հարիւրաւոր միաւորներու շնորհաւորանքը աշխարհի բոլոր մայրերուն, անոնց մաղթելով ոյժ, կորով եւ առողջութիւն:

Օրուան հանդիսավարը անդրադարձաւ ՀՀ դրօշին, որ Մարտ 1992-ին, Յայաստանի վերանկախութեան առիթով, ՄԱԿ-ի կեդրոնին առջեւ իր պատուաւոր տեղը գրաւեց աշխարհի անկախ պետութիւններու դրօշներուն կողքին: Այնուհետեւ Ազգ. Պատասպարանէն խումբ մը սաներ եռագոյն փոքր դրօշներով սրահ մուտք գործեցին եւ բեմ բարձրանալով հպարտօրէն արտասանեցին Յայաստանի օրհներգը:

Ապա Յուրի Տիլպերեան եւ Զրիստ Խրոյեան մանրամասնօրէն ներկայացուցին Յայ Կարմիր Խաչի ու ՅՕՒ-ի մասնաճիւղերու հիմնադրութեան ու ծաւալած գործունէութեան պատմական հանգրուանները՝ վեր առնելով անոնց ստանձնած ծանր պարտականութիւնը հայ ժողովուրդի օրհասական օրերուն՝ Մեծ Եղեռնի, երկու աշխարհամարտերու, երկրաշարժի, արցախեան պատերազմի տարիներուն եւ այլն: Անոնք շեշտը դրին հայոց պատմութեան ամբողջ ընթացքին Յայ Կնոջ ունեցած յատկանշական դերին վրայ:

Ձեռնարկի ընթացքին գեղարուեստական յայտագիրով ելոյթ ունեցաւ Մարինէ Մարգարեան մեկնաբանելով «Կռուսկ Գնա՛» եւ «Երագ Իմ Երկիր Յայրենի» երգերը, դաշնամուրի ընկերակցութեամբ Գայիանէ Տերեան-Սիմոնեանի: Իսկ ջութակահար Լիլա Սահակեան իր տպաւորիչ կատարումով ներկայացուց «Յայաստան» եւ «Պատրանքի Թելերով» կտորները, դաշնամուրի ընկերակցութեամբ Ռուզան Պարսումեանի:

ՍՕՒ-ի Շրջ. Վարչութեան խօսքը արտասանեց ատենապետուհի Հռիփ Կանանեան, որ անդրադարձաւ յարափոփոխ այս աշխարհին մէջ Յայ Կնոջ գործունէութեան՝ յիշեցնելով որ ՅՕՒ-ը մղիչ ոյժը եւ նուիրումի ու յանձնառութեան ոգին եղաւ սուրիահայ խաչուհիներուն, որոնք ժողովրդանուէր ծառայութեան ճամբով իրենց կեանքէն բաժին մը դրին միութեան գանձանակին մէջ, գործելով ի շահ սուրիահայութեան անվթար պահպանման:

Ապա բեմ իրաւորութեան երեւոյն եւ աւելի տարիներու ծառայութեան վաստակ ունեցող հետեւեալ

խաչուհիները՝ սրբազան հօր ձեռամբ գնահատագիրներ ստանալու. - Էօժէնի Մաւեան, Լուսին Ճապաղջուրեան, Անահիտ Տեկիրմենճեան, Մայտա Գեորգեան, Արտեմիս Բանոյեան, Սեդա Վերտանեան, Լուսին Յայրապետեան, Անի Արսլանեան, բժկի. Թագուհի Թաշճեան, Անժէլ Գաբրիէլեան, Շողիկ Ճապաղջուրեան, Լուսին Սողոյեան, Ժանէթ Լեպլեպճեան, Ալիս Թիւֆէնքճեան, Նուարդ Փոստալեան, Ժանէթ Ատուրեան, Սիրուն Տիգրանեան, Մարի Խուպիարեան, Լուսին Քահքէճեան, Արփի Յապէշեան, Անգինէ Մարութեան, Արսինէ Գաբրիէլեան եւ Չեփիւռ Աւագեան:

Այնուհետեւ Հ. Կանանեան մասնակցութեամբ ՅՕՒ-ի Կերը. Վրչութեան անդամ Աննա Տ. Յակոբեանի, առ ի երախտագիտութիւն՝ ՍՕՒ-ի «Կանթեղ» շքանշանով պարգեւատրեց Բերիոյ Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տեր Շահան Ս. Արք. Սարգիսեանը, որ Բերիոյ Թեմէն ներս ընդհանրապէս եւ ՍՕՒ-ի ու Ազգ. Պատասպարանի կողքին յատկապէս, իր հոգածու ներկայութեամբ, եղաւ ներշնչող ոյժ, քաջաւեր հայր եւ կորովի համայնքապետ, ի մասնաւորի Սուրիոյ ճգնաժամի դժնդակ տարիներուն:

Հուսկ, սրբազան հայրը իր սըրտի խօսքը ուղղեց ներկայ խաչուհիներուն՝ իմաստաւորելով մօր պանծացումը Մայրերու Օրուան տօնակատարութեան ընդմէջէն:

Տեր Շահան ըսաւ. «Յաճախ մտածած եմ, թէ աշխարհի մէջ կարելի չէ ապրիլ առանց մօր: Մենք մինչեւ մեր վերջին շունչը մեր մայրերը կը կրեցին մեր մէջ: Անշրջանցելի եւ անփոխարինելի իրենց ծառայութիւններուն համար աշխարհը երախտագիտական ինչպիսի խօսքեր ալ դրսեւորուած ըլլայ, աւելին կ'արժեն անոնք:

Կրկնակի կը յուզուիմ, երբ այս բեմին վրայ կը տեսնեմ 30 եւ աւելի տարիներ անսակարկ նուիրումով ազգին ծառայած կամաւոր մայրեր՝ խաչուհիներ:

ՅՕՒ-ի ճամբով ազգին ծառայելը նուիրական աշխատանք է, որ կնոջ գիտակցական բարձր մակարդակը ցոյց կու տայ:

Մայրերու Օրուան այս տօնակատարութիւնը Յայաստանի Յանրապետութեան հարիւր ամեակին ընծայաբերելը բնական երեւոյթ է, որովհետեւ ՀՀ կերտումով, մենք ձերբազատուեցանք թափառաշրջիկի իրավիճակէն եւ ունեցանք պետութիւն, ու ինքնահաստատման կարելոր յենարան մը:

ՅՕՒ-ը եւ ՍՕՒ-ը յանձնառու դեր ստանձնած են մեր պատմութեան գանազան փուլերուն՝ ջարդ, արցախեան ազատամարտ, սուրիական պատերազմ եւ այլն: Անոնք անվիատ շարունակած են իրենց ծառայութիւնը ամենուրեք:

Կը շնորհաւորեմ ՍՕՒ-ը, պարգեւատրուող խաչուհիները եւ մեր բոլոր մայրերը՝ այս տօնակատարութեան առիթով:

Հանդիսութիւնը փակուեցաւ սըրբազան հօր «Պահպանիչ» արօթքով եւ ՍՕՒ-ի քայլերգով:



Ռաֆֆի Միլախեան

## ՀԱՅԿԱԿԱՆ

### Իւրա Մովսեսեան Միացաւ Շուէտեան Ակումբին

Հայաստանի ազգային հաւաքականի նախկին յարձակողական խաղացող Իւրա Մովսեսեան տեղափոխուեցաւ Շուէտեան «Իւրկորթըն» ֆութբոլային ակումբ: Այս տեղեկութիւնները Մովսեսեան արձանագրած էր դիմատետրի իր էջին վրայ: «Ուրախ եմ յայտարարելու իմ «Իւրկորթըն» տեղափոխութիւնը: Շուէտի, ինչպէս նաեւ հիանալի ակումբի մը մէջ խաղալու լաւ կարելիութիւն է սա: Անհամբեր եմ, կ'ուզեմ սկսիլ մարզական իմ նոր ճամբան», գրեց Իւրի Մովսեսեան:



## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

### Ծանօթացում Ռուսիա 2018-ի Մասնակից Հաւաքականներու Պատմականին «ԹԻՒ - 17»

Իսլանտա

Իսլանտայի ֆութբոլը պատմութեան ընթացքին ոչ մէկ տպաւորիչ յարթանակ արձանագրած է: Ան այս տարի գտման փուլին իր խմբակի աղիւսակը գլխաւորելով առաջին անգամ ըլլալով մաս պիտի կազմէ համաշխարհային ֆութբոլի մրցումներուն:



Եւրոպայի ախոյեանական մրցումներուն, Իսլանտան մասնակցած է միայն մէկ անգամ՝ 2016-ին: Հաւաքականի պաշտօնական տարազը ճերմակն է, իսկ երկրորդական տարազը՝ կապոյտ: Հաւաքականի մարզիչի պաշտօնը վստահուած է Հիմպրը Հալկըրմինսընին: Յիշենք, որ Իսլանտա ամենէն փոքր տարածք ունեցող երկիրն է, որ մաս պիտի կազմէ համաշխարհային ֆութբոլի մրցումներուն:

### Մանչեսթըր Իւնայթըտ Մեծ Գումարներ Տրամադրած Է Նորեկ Խաղողներու

Անգլիական Մանչեսթըր Իւնայթըտի վարչակազմը յառաջիկայ իր ծրագիրներուն մէջ նկատի ունի խումբին միացնել նորեկ խաղողներ՝ աշխուժացնելու համար խումբի պաշտպանողական դիրքը: Վարչակազմը այս աշխատանքը յաջողցնելու համար պատրաստականութիւն յայտնած է հսկայ գումարներ տրամադրել խումբին միացնելու համար լաւագոյնները: Ըստ «Մեթրօ» լրատուամիջոցին, ակումբի պատասխանատուները բանակցութիւններ սկսած են վարել Պարսելոնայի պաշտպանողական խաղող ֆրանսացի Սամուէլ Ումթիթիի եւ Իտալիոյ Իւվենթուսի պրագիլցի մարզիկ Ալեքս Սանտրոյի հետ: Ըստ թերթին, ակումբը գոյգ խաղողներուն համար տրամադրած է 125 միլիոն ամ. տոլար: Այս խաղողներուն անունը առաջարկուած է խումբի մարզիչ Խոսէ Մորինիոյի կողմէ:



### Փարիզ Սան ժերման Ֆրանսայի Բաժակակիր

Նախորդ Շաբաթ տեղի ունեցաւ Ֆրանսայի բաժակին աւարտական մրցումը, որուն աւարտին մայրաքաղաքի խումբը յաջողեցաւ 3 - 0 արդիւնքով պարտութեան մատնել մրցակից Մոնաքօն: Վերջին երկու տարիներուն այս երկրորդ անգամն է, որ Սան ժերման կը յաջողի պարտութեան մատնել Մոնաքօն: Անցեալ տարի 4 - 1 արդիւնքով ան պարտութեան մատնեց իր մրցակիցը: Հանդիպումի կողերը նշանակեցին արժանաւորիցի Անիէլ Տի Մարիան եւ ուրկուէյի Բաւանին:



## ՈՎ ՈՐ ՉՈՒՆԻ ԱՅՂ ՈԳԻՆ՝ ԿԱՊԿՈՂ Է ՄԻԱՅՆ

(Ա. տարի, թիւ 33)

Մեր առօրեային մէջ կը կազմակերպուին հանրային ձեռնարկներ, որոնց նկարագրութիւնը դուրս է կարելիութեան սահմաններէն. պէտք է տեսնել ու ապրիլ զանոնք, որպէսզի կարենանք ըմբռնել անոնց արժէքը:

ՀՍԸՄ-ի միջ-մասնաճիւղային հանդիպումները վերոյիշեալ ձեռնարկներէն են:

Տարիներէ ի վեր սովորութիւն դարձած է գատակական տօնական օրերուն այդ մրցումները կազմակերպել Հալէպի մէջ:



Շնորհիւ մեր բարեխնամ կառավարութեան, այս տարի ես առիթ տրուեցաւ այս խաղերը կազմակերպելու Հալէպի մէջ՝ անսխալ ընթաց խանդավառութիւն յառաջացնելով ամենուրեք:

Առանց բառերը ծամծմելու կարելի է ըսել, որ Չատիկը Հալէպի մէջ հոմանիշ դարձած է ՀՍԸՄ-ի ոյժին ու կամքին փառաբանութեան, վերջիչեցնելով անցեալի «Նաւասարդեան Խաղերը»:

Այս տարի, ՀՍԸՄ-ի 31-րդ միջ-մասնաճիւղային խաղերը աւելի խանդավառութեամբ պիտի անցնին, որովհետեւ կը զուգահիշին երիտասարդական այս մեծ ընտանիքին քառասնամեակին: Հալէպի նահանգապետ Իսմայիլ պէյ Բուլի սիրով ընդունած է այս խաղերուն բարձր հովանաւորութիւնը, իսկ Բերիոյ Թեմի Բարեշան Առաջնորդ Գերշ. Տ. Ղեւոնդ Ս. Արքեպիսկոպոս՝ օրուան նախագահութիւնը: ՀՍԸՄ-ի 25-է աւելի մասնաճիւղերը պիտի մասնակցին ֆութբոլի, պասքէթբոլի, վոլէյբոլի, փինսկ փունկի եւ հեծելաքաշի հանդիպումներուն:


Երկուշաբթի, 7 Ապրիլի կէսօրէ ետք, ֆութբոլի Ա. դասի աւանդական եզրափակիչ մրցումէն անմիջապէս վերջ, երկու հազարէ աւելի մարզիկ-մարզիկուհիներէ, սկաւտներէ, արեւուշներէ եւ գայիկներէ բաղկացած բանակ մը, Հալէպի Մասնաճիւղի սկաւտական նուագախումբին առաջնորդութեամբ, աւելի քան 30 հազար ներկաներու ծափերուն տակ պիտի տողանցեն:

ՀՍԸՄ-ի այս մեծ ձեռնարկին տարողութիւնը հասկնալը դիւրին գործ չէ: Շատեր (հակառակ իրենց կիթաական մութ աղբիւրներուն) իրենց ուղեղը պայթեցուցին փորձ մը ընելու համար, սակայն չհասկցան թէ ի՞նչ կերպով կարելի է գլուխ հանել այսպիսի ձեռնարկ մը, որ միայն պետական միջոցներով կարելի է կատարել ուրիշ երկիրներու մէջ:

Չարմանալի ոչինչ կայ սակայն՝ Միայն ՀՍԸՄ-ի շարքերուն մէջ տիրող ոգիով է, որ կարելի է իրականացնել այսպիսի գործեր:

Պարզապէս իւրաքանչիւր ՀՍԸՄ-ականի գիտակցական գոհողութեամբ է որ այս մեծ գործը յաջողութեամբ կը պսակուի: Ով որ չունի այդ ոգին եւ գիտակցական այդ գոհողութիւնը, չի կըրնար իրագործել այս գործին յար եւ նմանը, այլ միայն կրնայ կապել...:

Չաւեն Սապունճեան



## ՍՕՒՆ-Ի ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐՈՒՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ ՆՈՒԻՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ

Հովանավորությամբ Բերիոյ Հայ Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Շահան մայրեր նուիրաբերեցին ամենաթանկը՝ իրենց հոգեհատորները:



Ս. Արք. Սարգիսեանի, Չորեքշաբթի, 28 Մարտ 2018-ի երեկոյեան ժամը 4:00-ին տեղի ունեցաւ ՍՕ Խաչի Շրջ. Վարչութեան կազմակերպած Մայրերու Օրոնան տօնակատարութիւնը:

Օրունան հանդիսավար Մարալ Տիգրայի տնօրէնի մեջբերելով Արամ Ա Կաթողիկոսին խօսքը, բացուած յայտարարեց հանդի-



Հայերն բացման խօսքով Սեդա Կերկերեան յայտնեց, որ Մայրերու



տութիւնը, որ նուիրուած էր Հայաստանի Հանրապետութեան կերտումի 100-ամեակին՝ «Հայաստանի Հան-



Օրունան տօնակատարութիւնը նուիրուած է ՀՀ Պետականութեան վերականգնման, հետեւելով Արամ Ա. Կա-




րապետութիւնը եւ Խաչուհին» խորագիրով:



թողիկոսի թելադրանքին՝ ըստ արժանւոյն յիշատակելու անկախութիւնը սիրագործած սերունդը, իսկ ՍՕ Խաչը այս ծեռնարկով կու գայ յարգելու Նաեւ մեզ մէջ ընդմիջտ հեռացած անձուեր խաչուհիները:

Ներկաները մեկ վայրկեան յոտընկայս յարգեցին յիշատակը մեզ մէջ առ յաւետ բաժնուած խաչուհիներուն: ՀՀ-ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ Աննա Տ. Յակոբեան ներկայացուց ՀՀ-ի հսկայածաւալ աշխատանքը՝ ներագգա-



ղութիւնները ընտանիքին ու մասնաւորաբար հայրենիքին նկատմամբ, որուն վառ օրինակը ցուցաբերող պատերազմի օրերուն, երբ

ին թէ միջազգային գետնի վրայ, անդրադառնալով Հայաստանի, Ար-

**Մարալ Տ. Մանուէլեան**  
Շար.՝ 12 14 >

## ՌՈՒՄԵՐՈՒ ՏԱԿ ՄՏԵՂՈՒՄԸ ԱՐՈՒԵԱՍԸ

«Ռումբերու Տակ Ստեղծուած Արուեստը»: Այսպիսի իմաստալից և ի հանրապետութեան Հալէպի մեծարգոյ հիւպատոսը եւ ներկաները ու



խորագիրով Համազգայինի «Ն. Աղբալեան» Մասնաճիւղի «Մուշեղ Իշխան» Գրական Յանձնախումբը, Համազգայինի հիմնադրութեան 90-ամեակի ծիրէն ներս, Նախաձեռնեց մշակութային գործունեութեան խորհուրդը ներկայացնող ձեռնարկ մը, որ տեղի ունեցաւ Ուրբաթ, 23 Մարտ 2018-ի երեկոյեան ժամը 6:30-ին, ԱՄԺ Տան «Լ. Շահն» սրահէն ներս, շուրջ երկու հարիւր յիսուն հանդիսատեսներու ներկայութեամբ:

Նախքան յայտագիրը ներկաները ըմբռնեցին Յովհաննէս Թումանեանի «Անուշ» օփերայէն հատ-

ըսաւ. «Այսօր՝ Համազգայինի Գրական Յանձնախումբը սրբազան պար-



տականութիւն եւ լուրջ պատասխանատուութիւն կը գգայ, պատերազմի թոհ ու բոհի տակ ստեղծուած մշակութային արուեստը հասցնելու արուեստասէր հանրութեան: Այս ձեռնարկը անոր լաւագոյն առիթն ու դրդապատճառն է»:



Տեխնիկական շեշտեց. «Հեռուէն շատ դիւրին է գրել հայրենասիրական յորուածներ, սակայն Հալէպի մէջ, ար-



նէրու ցուցադրութիւն, ճարտարապետական գործերու, գրական պատառիկներու ընթերցումներ եւ գե-

եան գնով մոլթի եւ մահուան սարսափի տակ ծնունդ առած արուեստը ժամանակը անպայման շատ բարձր



ղարուեստական կոկիկ յայտագիր մը:

Սուրիոյ եւ Հայաստանի քայլերգներէն ետք, օրունան բեմավար-

պիտի գնահատէ»: Բացման խօսքէն ետք, բեմավարները փոխադարձաբար ընթերցեցին «Հալէպագրութիւն» ոտանաւորը:



Ներ՝ Զրիստ Գարամանեան եւ Նաւոր Նալպաստեան, բեմ հրաւիրեցին Սեւան Տեխնիկեանը՝ արտասանելու Գրական Յանձնախումբի բացման խօսքը: Ան ողջունեց Հայաստա-

Ապա բեմ հրաւիրեցին Համբիկ Բեքիմեանը, որ իւրայատուկ ոճով մեներգեց «Leave Us In Peace» երգը,

**Մարին Հայրապետեան**  
Շար.՝ 12 14 >